


Գ. Ե. ԱՎԵԱՆՅԱՆ

ԾՆՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**



ՀՈՒԶԱՐԱՑ

15 FEB 2013

45.363

13 MAR 2010

Ա.

ՍՈՎԵՏՈՒՄՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵՒԱՅԻ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԸ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարոյականությունը դասակարգային է՝ և պատմականորեն միշտ ենթարկվել է փոփոխությունների։ Բարոյականությանը անցյալում տվել են այնպիսի հիմնավորում ու բովանդակություն, որով նա պետք է ծառայի տիրող դասակարգերի տիրապետությունը պահպանելու գործին։ Այսպես, բուրժուազիան բարոյականությունը բխեցրել է իր շահերից և տվել է նրան այնպիսի բովանդակություն, որի միջոցով առավել հաջող պահպանվի կապիտալիստական հարաբերության «հավասարակշությունը» և կապիտալիստական հասարակակարգի «հավիտենականությունը»։

Բուրժուական բարոյականությունը տրվում է որպես հավիտենական «աստվածային հրաման», սակայն «մեզ համար մարդկային հասարակությունից դուրս վերցրած բարոյականություն գոյություն չունի, դա կեղծիք է։ Մեզ համար բարոյականությունը ենթակա է պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերին։ Բարոյականությունը ծառայում է այն բանին, որպեսզի մարդկային հասարակությունը վեր բարձրանա, ազատվի աշխատանքի շահագործումից» *):

Բարոյականության ապաղասակարգայնության և հավիտենականության գաղափարը բուրժուազիայի կողմից հնարգած կեղծիք է։ Սակայն «մենք ի՞նչ իմաստով ենք ժխտում մորալը, ժընտում բարոյականությունը. նման ամեն մի բարոյականություն, որ դուրս է մարդկային-դասակարգային հասարակությունից,

*.) Լենին—Մտալին «Երիտասարդության մտուն» 1939 թ. հրատ. էջ 263, 267։



2425
Ա

մենք ժխտում ենք, որ դա կեղծիք է, որ դա խաբեռություն է և բանվորների ու գյուղացիների միտքը ծեծկեն է՝ կալվածտերերի և կապիտալիստների շահերի համար» (Լենին—Ստալին—«Յերիտասարդության մասին», 1939 թվի հրատ. էջ 263):

Բուրժուական բարյականությունն ամրացնում է կապիտալիզմի տիրապետությունը, օրինականացնում է շահագործման գոյությունը, զարգացնում է հսասիրությունը (էգոյիզմ) և ուժեղացնում է շահագործող փոքրամասնության բանությունը մեծամասնության՝ բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության և ինտելիգենցիայի հանդեպ: Պարզ է, որ այդպիսի բարյականություն հարկավոր է բուրժուազիային, հարկավոր է նրա համար, որպեսզի ան ու սարսափի մեջ պահի աշխատավորությանը, որպեսզի պրոլետարիատին հեռու պահի մարդկության ազատագրման համար մզգող պայքարից:

Պրոլետարիատի բարյականությունը բուրժուազիայի բարյականության հակապատկերն է: Պրոլետարիատի բարոյականությունը—դա կոլեկտիվիստական, հասարակական սեփականության, շահագործում առաջացնող պայմանների իսպառ վերացման, մարդկային իրավահավասարության հաստատման և կոմունիստական հասարակակարգի վերջնական ավարտման բարոյականությունն է: Պրոլետարական բարյականությունը ենում է բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության շահերից և ամբողջովին ծառայում է նրանց:

Ընկեր լենինն անդրադառնալով աճողսերնդի դաստիարակության հարցերին ասել է. «Նա (աճող սերունդը—վ. Ա.) կարող է կոմունիզմ սովորել, միայն իր ուսման, դաստիարակության և կը թության յուրաքանչյուր քայլը կապելով հին, շահագործական հասարակության դեմ մղած ընդհանուր պայքարին: Կոմունիստական բարյականության հիմքում դրված է կոմունիզմն ամրացնելու և իրականացնելու պայքարը: Ահա թե որն է նաև կոմունիստական դաստիարակության, կը թության և ուսման հիմքը, (լենին—Ստալին—«Յերիտասարդության մասին», 1939 թ. հրատ. էջ 267, 268):

Սովետական դպրոցի և ընտանիքի պարտքն է՝ աճող սերնդին տալ կոմունիստական բարյականության դաստիարակություն, որովհետև Շմամանակակից կը թության և ուսման ողջ գործը պետք է նրանց մեջ կոմունիստական մորակի դաստիա-

րակություն դառնա» (Լենին—Ստալին—«Յերիտասարդության մասին», էջ 263): Այսպիսով՝ ուսման, կը թության և դաստիարակության հիմնական նպատակը պետք է դառնա սոսցիալիստական նոր մարդու ստեղծումը, նոր մարդ, որը պետք է օժանակած լինի մարդու ամենալավ հատկությունն երպիկ ունենալու համություն և տիրապետի դիտունների հիմունքները:

Այժմ անցնենք նոր մարդու հատկությունների դաստիարակման հիմնական հարցերի քննությանը:

ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հերոսությունն ու խիզախությունը սովետական ժողովրդի հիմնական հատկանիշներն են: Մեր այսօրվա մատաղ մերունդը շրջապատված է սովետական ժողովրդի, պատմության մեջ չտեսնելի հերոսությունների հարուստ օրինակներով: Զելյուսկինցիների, պապանինականների, սեղովցիների, քաղաքացիական կռվի հերոսների, անվանի ստախանովականների, խիզախ օդաչուների, Խասանի անօրինակ հայրենասերների և պատանի հերոսների կյանքի ու գործունեության փայլուն օրինակները վիթխարի նշանակություն, ունեն երեխաների մեջ խիզախության, արիության և հերոսության հատկանիշներ արմատավորելու տեսակետից: Երեխաները լսելով ծնողների մատչելի ու գրավիչ զրուցները ուսուցեցիայի առաջնորդների, մեր երկրի անօրինակ հերոսների կյանքի մասին, նրանք ոչ միայն կարեն ու կոգեկորվեն մեր երկրի անվանի մարդկանց պայքարով ու աշխատանքով, այլև կձգտեն նմանվել նրանց, դաւնալ նրանց պես հերոսներ: Կորոստինիայի գվըրոցի 8-րդ դաստիարակի աշակերտ Ֆրիդմանը գրում է. «Ես ուզում եմ իրագործելի իմ վաղեմի երազը՝ դառնալ զինվորական մարդ, որ կարողանամ իմ հայրենիքը թշնամուց պաշտպանել կարմիր Բանակի բոլոր մարտիկներին համահամասար».

Ահա մի այլ օրինակ. Վիտյա Մորոզովը կարմիրբանակային չէ, այլ զպրոցական և պիոներ: Բայց նա իրեն զգում է աներկյուղ մարտիկ, կարմիրբանակային, ուսմանապահ: Նա

կնում էր գյուղի փողոցներով երեք սահմանափակների հետ ձեռաքերը թափ տալով, ջանալով և տ չմնալ կարմիրբանակայիններից: Անցնելով գյուղի մի քանի փողոցներ Վիտյան կանդ առավ ծղոտի կույտերի առաջ:

— Ահա այստեղ է, — ասաց նա սահմանափակներին: Սահմանափակները ծղոտի կույտերում թաքնված լրտեսին բռնհցին: Պիսներ Վիտյան, իր հերոսությամբ, խանգարեց լրտեսին իր չարանենդ նպատակներն իրագործել:

Մեր հրաշալի մանուկների մեջ ֆրիդմանի նման հայրենասերների ու Վիտիայի նման անվախ հերոսների թիվը տասնյակ հազարների է համուռմ: Մեր սոցիալիստական հայրենիքի յուրաքանչյուր պատանին ունի բոլոր պայմանները հենց այդպիսի անվախ հերոս դառնալ: Եվ մենք այդ ոգով էլ դաստիարակում ենք մեր մանուկներին, որպեսզի նրանք դառնան ամուր կամքի տեր, ունենան նպատակի պարզություն, և համառություն՝ նպատակին համունու համար, կարողանան սանձահարել բնության տարերին ու դառնալ մեր հերոս ժողովրդի արժանի փոխարինում:

Երեխանների մեջ արիության, խիզախության և հերոսության հատկանիշների դաստիարակությունը պետք է սկսել ամենափոք հասակից: Երեխային երբեք ցույց չպետք է տալ նրա անգոր և թույլ լինելը, եթե չենք ցանկանում, որ նա լինի վախկոտ և թերահավատ իր ուժերի նկատմամբ: բացի այդ, երեխային ոչ մի գեղքում չպետք է վախեցնել զանազան գաղանաների անուններ տալով կամ այլ միջոցներով: Ընդհակառակը, երեխայի մեջ պետք է ներշնչել հավատ դեպի իր ուժերը, պետք է խրախուսել նրա ամենափոքը նախաձեռնությունն անդամ և ցույց տալ, որ նա իր սեփական ուժերի և համառ պայքարի հետեանքով կարող է դառնալ մեր երկրի անվանի հերոսներից մեկը:

ԻՆՉՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ՄԵՐ ԳԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Մեր երկրում աշխատանքը փառքի, պատվի և հերոսության գործ է: Երեխաններին բազմաթիվ փաստերով պետք է ցույց տալ, որ եթե հասակավոր և առողջ մարդն ապրում է, սնվում է և չի աշ-

խատում, ապա նա յուրացնում է ուրիշների աշխատանքի արդյունքները: Ուրիշի աշխատանքի յուրացումն անհամատեղելի է սոցիալիստական հասարակարգի սկզբունքների հետ և այդ պատճառով սովետական յուրաքանչյուր քաղաքացի ստանում է այնքան, որքան աշխատում է: Երեխայի մեջ գեղի աշխատանքը սոցիալիստական վերաբերմունքի դաստիարակությունը, միայն խոսքի ուժով հնարավոր չէ կատարել երեխան պետք է գործնականում տեսնի, որ իրոք «աշխատանքը պատվի, փառքի և հերոսության գործ է»:

Աշխատանքը միշտ եղել է հիմք մարդկային կյանքի և կուլտուրայի համար: Ուստի դաստիարակության գործի մեջ էլ աշխատանքը ամենահիմնական տարրերից մեկը պետք է լինի: Բոլորին պարզ է, որ բնությունից բոլոր մարդիկ մոտավորապես հավասար տվյալներ են ստանում, սակայն կյանքի մեջ որոշ մարդիկ կարողանում են ավելի լավ աշխատել, ուրիշներն ավելի վատ: Աշխատանքային այս տարբեր հատկությունները բնությունը չի տալիս մարդուն: Դրանք մարդու մեջ դաստիարակվում են նոր կյանքի ընթացքում և հատկապես պատանեկական տարիներին:

Սովետական երկրում ամեն մի աշխատանք ստեղծագործական աշխատանք պետք է լինի, որովհետեւ նա ամբողջապես ծառայում է աշխատավորների երկրի համար, աշխատանքը կարող է ստեղծագործական լինել այն ժամանակ, երբ մարդը գործին վերաբերվում է սիրով, երբ նա գիտակցաբար գործի մեջ ուրախություն է տեսնում, հասկանում է գործի օգտակարությունը: Հասկանալի է, որ ստեղծագործական աշխատանքը չեն կարող կատարել այն մարդիկ, որոնք աշխատանքից վախենում են, չեն սիրում աշխատել և աշխատանքային վատ դաստիարակություն են ըստացել:

Դեպի աշխատանքն աղնիվ, համարձակ վերաբերմունքը մարդու մեջ դաստիարակում է նաև ճիշտ վերաբերմունք մյուս մարդկանց նկատմամբ, որովհետեւ համատեղ կատարած աշխատանքը, աշխատանքային փոխադարձ օգնությունը միայն կարող է ճիշտ հարաբերություն ստեղծել մարդկանց մեջ միմյանց նկատմամբ:

Հենց փոքր հասակից երեխային պետք է սովորեցնել ու

մասնակից դարձնել տնային ոչ շատ բարդ աշխատանքների, երեխան փոքր հասակից պետք է իրեն օգտակար զգա ընտանիքի համար:

Ընտանիքում երեխայի առաջ մի ուրիշ խնդիր պետք է դրվի, որը նա կարող է լուծել զործադրելով աշխատանքային այս կամ այն միջոցը: Այս հորցում երեխային պետք է որոշ աղատություն տրվի միջոցների ընտրություն կատարելու: Նա պետք է պատասխանատվություն կրի աշխատանքը ժամանակին և որակով կատարելու համար:

Երեխային կարելի է հանձնարարել երկար ժամանակով, որ նա մաքրություն պաշտպանի իր սենյակում, իսկ թե ի՞նչպես կանի, այդ իր գործն է:

Երեխայի աճման հետ միասին աշխատանքային հանձնարարությունները պետք է բարդացվեն: Երեխային կարելի է հանձնարարել բնակարանի ծաղիկները ջրելու պարտականությունը, միշտ կարգին ու մաքուր պահել գրքերի պահարանը, նա պետք է գիտենա կարել իր շորերի կտրված կոճակները, նա կարող է ստանալ թերթերը և կարգին վիճակում պահել: Նման աշխատանքներ կլինի յուրաքանչյուր ընտանիքում, միայն հարկավոր է խելացիորեն կազմակերպել երեխայի աշխատանքային դաստիարակությունը: Եթե երեխան ընտանիքում աշխատանքային ճիշտ դաստիարակություն ստանա, նա հետագայում մեծ հաջողությամբ կընտրի իր մասնագիտությունը, ընդհանուր պահանջման դաստիարակությունը: Եթե երեխան ընտանիքում աշխատանքային ճիշտ դաստիարակություն ստանա, նա հետագայում մեծ հաջողությամբ կընտրի իր մասնագիտությունը, ընդհանուր պահանջման դաստիարակությունը: Այսուեղ կարենը է հիշատակել նաև դպրոցի մասին: Եթե դպրոցում տարրող ուսուցչում է անձարակ ու երեսառած, եթե ծնողները չեն հետաքրքրվում երեխաների աշխատանքային դաստիարակությամբ, եթե երեխան դաստիարակությամբ, եթե երեխան դաստիարակությամբ, որոնք գեր չեն չեն աղատվել աշխատանքից: Այսուեղ կարենը է հիշատակել նաև դպրոցում գերազանց գնահատականներ ունեցող աշխատանքի դրական կողմերով, համոզել երեխային, որ գերազանց սովորելը լավ աշխատանքի արդյունք է:

Այսուեղ կարենը նշանակություն ունի ծնողների և բոլոր մեծահասակների անձնական օրինակը: Եթե երեխան տեսնում է, որ ծնողներն իրենց գործով չեն հետաքրքրվում, հասարակական աշխատանքներից փախչում են, աշխատում են ոչ անկեղծ, ցույցի համար, —այդպիսի ծնողներին երեխան չի հարգի: Եթե չես սիրում գործը, չես կարող երեխան մեջ սերդաստի աշխատանքը և աղատականը, այլև պետք է անկեղծ ու աղջիկ վերաբերմունք ունենա գեղակի գործը, գեղակի իրեն հանձնարարված պարտականությունների կատարումը: Այս դեպքում հեշտ կլինի երեխային աճեցնել, որպես սովետական լիարժեք քաղաքացի:

Երեխայի միջ պետք է առաջացնել խոր ատելություն գեղակի գործալիքները: Մեր աճող սերունդը ոչ միայն պետք է ատի գործալիքներին, ծույլերին ու անազնիվ մարդկանց, այլև գործոն մասնակցություն պետք է ունենա գործալիքների գեմ սովետական ժողովրդի պարտքն է երեխաներին բացատրել և ոգեսորել մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորների և ստախանովականների աշխատանքի լավագույն օրինակներով, որպեսզի մեր այսօրվա պատանին ոչ միայն լավ աշխատի ուսման բնագավառում, այլև համառությամբ պատրաստվի գիտության, կուլտուրայի և արտադրության առաջավոր գաղնալու, աշխատանքի հերոս դառնալու: Երեխային պետք է ոգեսորել նաև դպրոցում գերազանց գնահատականներ ունեցող աշխատանքի դրական կողմերով, համոզել երեխային, որ գերազանց սովորելը լավ աշխատանքի արդյունք է:

ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԴԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Գիտական կարգապահությունը հանդիսանում է երեխայի կոմունիստական դաստիարակության կարենը հարցերից մեջը: Գիտական կարգապահությունը, գա շահագործումից և ամեն տեսակի ճնշումից ու հարկացրանքից աղատված մարդու կարգապահությունն է: Եթե կարգապահությունից աղատված մարդու կարգապահությունը ստեղծվում է ծեծի, ստրկացման, հարկադ-

լանքի ու հնագանդեցյան բաղմաթիվ եղանակների գործադրի-
մամբ, ապա մեզ մոտ, սովետական հայրենիքում, աշխատավոր-
ների ու նրանց երեխաների մեջ կարգապահությունը պահպան-
վում և ամրապնդվում է կամավոր հիմունքներով։ Դեպի աշխա-
տանքը սոցիալստական վերաբերմունքը, նպատակի պարզու-
թյունը և նպատակին համեմու համար համառությունը հանդի-
սանում են մեր աշխատավորության գիտակցական կարգապահու-
թյան հիմքերը։

Այս տեսակետից, սովետական ընտանիքի պարտքն է, երե-
խաների մեջ զարգացնել գիտակցված հարգանք դեպի սովետա-
կան մեծ պետության օրենքները, դեպի սոցիալստական համա-
կեցության կանոնները և դեպի դպրոցի կարգ ու կանոնի պահ-
պանումը։ Երեխաները գիտակցական մոտեցում պետք է ունենան
ուսման և կրթության գործի նկատմամբ, կուլտուրական, կիրթ
վերաբերմունք պետք է ունենան դեպի ուսուցիչը, ծնողները և
ընդհանրապես դեպի մարդը։ Երեխան պետք է կարգապահ լինի
նաև այն դեպքում, երբ նրա վրա բացակայում է արտաքին
հսկողությունը։ Ավելին, նա ոչ միայն պետք է կարգապահ լինի,
այլ պետք է պայքարի անկարգապահության դեմ, կարգապահու-
թյունը խախտողների դեմ։

Վերոհիշյալ հատկությունները երեխաների մեջ արմատա-
վորելու համար ծնողները իրենք պետք է ցույց տան բարձր
կարգապահության օրինակներ։ Այսպես՝ ծնողների ժամանակին
աշխատանքի գնալը, իր աշխատանքում առաջավոր լինելը, կուլ-
տուրական վերաբերմունքը շրջապատի մարդկանց նկատմամբ և
այլն, — հսկայական դաստիարակչական նշանակություն ունեն։
Մյուս կողմից, ծնողները երբեք երեխաներին առանց հսկողու-
թյան չպետք է թողնեն, ընդհակառակը, ծնողները պետք է հե-
տևեն, որ երեխաները ճշտապահ լինեն, պատասխանատվություն
դգան իրենց հանձնարարված աշխատանքի համար, ժամանակին
և ճիշտ կատարեն անային ուժիմի պահանջները և այլն։

Համականալի է, որ երեխաների վատ առաջադիմության և ան-
կարգապահության համար չի կարելի միայն ուսուցչին մեղադ-
րել։ Երեխան օրվա մեծ մասն անց է կացնում դպրոցից դուրս—
տանը. դրա համար էլ անհրաժեշտ է ծնողների ակտիվ օգնու-
թյունը դպրոցականների վարքի դաստիարակման բնագավառում։

Ուստի և երեխայի վատ արարքի համար պետք է պատաս-
խանաւու լինեն և ծնողները և դպրոցը։ Հակառակ դրան,
ծնողներից ուժանք, երեխաների ներկայությամբ, ուսուցչի հաս-
ցեին թույլ են տալիս անվայել արտահայտություններ, ինկ
առանձին դեպքերում նույնիսկ իրենց պաշտպանության տակ են
առնում երեխաների անկարգապահությունը և դրանով երեխա-
ներին հրում նոր անկարգապահական արարքների կատարման
ուղին։ Օրինակ, երեխաներին ժամը 9-ից հետո չի թույլատըր-
վում կինո գնալ սակայն ծնողներից ուժանք երեխաներին իրենց
հետ կինո են տանում այն ժամին, երբ նրանք պետք է քնին։
Դրանով երեխային սովորեցնում են խախտել իր համար սահ-
մանած կարգ ու կանոնը։ Շատ դեպքերում էլ ծնողները չեն հե-
տաքրքրվում երեխաների վարքով, չեն հանդիմանում նրանց հա-
կանասարակական արարքները և այլն։ Որոշ ընտանիքներում
երեխաներին իրեն են տալիս, նրանց դարձնում են փոքրիկ չի-
ուովնիկներ։ Շատ հաճախ երեխասարդ ծնողները երեխայից պա-
հանջում են, որ իրենց անունով կանչի, փոխանակ հայրիկ և
մայրիկ ասելու։ Ահա այդ երեխան աստիճանաբար դառնում է
փոքրիկ բոնակաւ հորը անունով կանչելով՝ ջուր է պահանջում,
բարկանում է մոր վրա, իսկ ծնողները հնազանդ կերպով կատա-
րում են երեխայի անտեղի պահանջներն ու կարգավորություն-
ները։ Այսպիսի ընտանիքում երեխան զանում է ինքնիշխան,
հրամայող և ընդհանրապես անկարգապահ։ Բնական է, որ ծնո-
ղական վտանգավոր սիրո պայմաններում դաստիարակված երե-
խան դպրոցում կարգապահ լինել չի կարող, ուսուցչին չի հար-
գի և կոկսի իրեն պահել կարգագրողի դերում։

Պակաս զայրացուցիչ չի նաև մի այլ երեսույթ։ Ծնողների
աչքի առաջ երեխան անկարգապահություն է անում, հրում է կամ
ապտակում է մյուս երեխաներին, քար գցում անցնող ու դարձող
մարդկանց վրա, ծխում է, դատարկում է գինով լիքը բաժակը
և այլն։ Այս երեսույթներին ականատես ծնողը հրճվում է իր
երեխայի այդ «անօրինակ քաջագործություններով» և խփելով
նրա ուսին ավելացնում է՝ «ապրես, ապրես, իսկապես հորդ
տղան ես»։

Այսպիսի ծնողները, ելնելով իրենց «զաստիարակչական
սկզբունքներից» բոլորովին չեն հետաքրքրվում դպրոցի կյան-

քով, չեն մասնակցում ծնողական ժողովներին և չեն վրդովվում
երենց երեխաների անկարգապահության ու վատ սովորելու մա-
սին լսելիս:

Կասկածից վեր է, որ ծնողները պետք է սիրեն երեխանե-
րին, սակայն այդ սերը, չպետք է արտահայտվի վտանգավոր ու
մեղրածոր փայփայանքներով, որովհետեւ, «Երեխաներին սիրելը,
այդ հաջող էլ կարող է,—զրել է Մաքսիմ Գորկին,—իսկ նրանց
դաստիարակել կարողանալը—այդ պետական մեծ գործ է, որը
պահանջում է տաղանդ և կյանքի լայն ճանչում»:

Հիշատակված «բարյացակամ» ծնողների վարմունքին հա-
կառակ, շատ ծնողներ էլ երեխային պահում են ան ու սարսա-
փի մեջ—հանդիմանալով նրա յուրաքանչյուր քայլն ու արար-
քը: Այս ձևով վարդելը նույնպես իր վտանգն ունի:

Ծնողը, ծայրահեղ գեպքում, երեխայի նկատմամբ կարող է
կիրառել հարկադրանքի, տույժի որոշ միջոցներ: Այստեղ մենք
սկսածի չունենք բուրժուական զպրոցին և ընտանիքին հատուկ
մարմական ծեծը, երեխայի ինքնասիրությունը վիրավորող բազ-
մաթիվ միջոցները: Ընդհակառակը, պետք է վերջ տալ երեխա-
ներին ծեծելու և, հին դպրոցին հատուկ, պատիժներով ազգելու
պրակտիկային, որին երբեմն դիմում են առանձին ծնողներ: Երե-
խաների վատ արարքների գեպքում ծնողները կարող են զգու-
շացնել, բացատրել արարքի հականասարակական, հակաբարոյա-
կան իմաստը: Ավելի լուրջ հանցանքների դեպքում, կարելի է
նկատողություն անել, զրկել խոստացած նվերից, զբոսանքից և
այլն, որոնք ոչ հաճախակի կրկնելու դեպքում, դրականորեն կազ-
զն երեխայի վրա:

Հաճախ ծնողները հանդիմանում են երեխայի՝ իրենց դուր
չեկող յուրաքանչյուր քայլը: Անտեղի կշտամբանքները, անընդ-
հատ կրկնվող նկատողությունները դառնում են սովորական և
կորցնում են իրենց արժեքը: Ծնողների և երեխաների այսպիսի
հարաբերությունները թուլացնում են ծնողների խոսքի հեղի-
նակությունը: Դրա համար բոլորովին անհրաժեշտ չէ երեխային
ամեն ըոսք նկատողություն անել: Ծնողը, ինչպես ասացինք
վերևում, երեխային կարող է նկատողություն անել ծայրա-
հեղ գեպքում, երբ երեխան թույլ է տվել համեմատաբար լուրջ
հանցանք: Դլխավորը, մեր կարծիքով, երեխայի հետ ազնիվ լի-

նելն է, անձնական լավ օրինակ ցույց տալը, մեր երեխաներին
իսկական սոցիալիստական քաղաքացիներ՝ ազնիվ, քաջ, զար-
գացած ընկերական զգացմունքով, երեխաների հոգեբանության
և նրանց հնարավորությունների սահմաններում միանգամայն
կարգապահ քաղաքացիներ դաստիարակելն է: Լինել ազնիվ և
կարգապահ երեխաների նկատմամբ և նույնը պահանջել նրա-
նից,—այդ նշանակում է նրանց դաստիարակել որպես սովորա-
կան լիարժեք քաղաքացիներ, այդ նշանակում է կատարել ծնո-
պական պարտքը հայրենիքի հանգեց:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱԿԱՆ ԻՆՍԵՐԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սովորական հայրենասիրության և սոցիալիստական հու-
մանիզմի դաստիարակությունը պետք է կապել պրոլետարական
ինտերնացիոնալիզմի բարձր գաղափարների դաստիարակության
հետ, որովհետեւ սովետական հայրենասիրությունը թշնամի է ժո-
ղովուրդների ճնշման ու մեկ ազգ մյուսից բարձր դասելու բուր-
ժուական տեսությանը:

Լինինյան-ստալինյան ազգային քաղաքականության փա-
ռավոր հաղթանակը հիմք դրեց Սովետական Միության բազ-
մազդ ժողովուրդների իրավահավասար և եղբայրական ընտանի-
քին: Սովետական հայրենիքի անվախ հայրենասիրները, ստա-
խանովականները, օգային տարածությունների հերոսները, կար-
միր Բանակի խիզախ մարտիկները և ժողովրդի ծոցից ժուրո-
եկած հարյուր հազարավոր տաղանդավոր մարդիկ աշխատում են
սովետական ժողովրդի համար, ստեղծագործում են մեր երկրի
հզորացման ու նոր հաղթանակների համար:

Երեխաներին պետք է բացատրել, որ տարբեր ազգությունների
աշխատավորների շահերը մեկ են, որ կապիտալիստական երկրների
աշխատավորների պայքարը կապիտալիզմի, շահագործման,
իրավազրկման ու կեղեքման դեմ, հանդիսանում է մեր պայքա-
րի ու կառուցման անբաժանելի մասը: Սովետական պատանին
դաստիարակվելով սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով,
պետք է պատրաստ լինի պաշտպանել ամբողջ աշխարհի աշխա-
տավորության շահերը, պետք է կարողանա իր անհատական շա-
հերը ենթարկել միջազգային պրոլետարիատի և աշխատավորու-
թյան շահերին:

Մեր պարտիան և նրա մեծ առաջնորդներ՝ լենինը-Ստալինը
միշտ էլ մեր մասսաներին դաստիարակել են պրոլետարական
ինտերնացիոնալիզմի ոգով, մեր հայրենիքի բազմաթիվ աղքու-
թյունների և ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի համերաշ-
խության ոգով։ Մեր հայրենիքի յուրաքանչյուր քաղաքացի գի-
տե, որ մենք առաջինը փշեցինք կամիստալիզմի շղթան և սո-
ցիալիստական հաստարակակարգի կառուցման բնագավառում հըս-
կայական հաղթանակներ տարանք—միջազգային պրոլետարիա-
տի բարոյական ակտիվ օգնության շնորհիվ։ Նա գիտե նաև, որ
միջազգային պրոլետարիատը պայքարում է կապիտալիզմի դեմ
ուսւ մեծ ժողովրդի պայքարի հարուստ փորձի օրինակով։ Յա-
շիստական իտալիայի, Ճապոնիայի և մյուս բոլոր կապիտալիս-
տական երկրների բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղա-
ցիությունը եղել են ու հանդիսանում են մեր լավ բարեկամնե-
րը, մեր սոցիալիստական հայրենիքի լավագույն պաշտպան-
ները։

Մեր Միության բանվոր դասակարգը մի մասն է համաշ-
խարհային բանվոր դասակարգի և հանդիսանում է նրա առա-
ջավոր ջոկատը, իսկ մեր սոցիալիստական հայրենիքը—դա ամ-
բողջ աշխարհի բանվոր դասակարգի ու աշխատավորության հայ-
րմունիքն է։ Այժմ, երբ վճռական նշանակություն է ստանում մաս-
սաների կոմունիստական դաստիարակությունը, առավելապես
անհրաժեշտ է ամրացնել պրոլետարական ինտերնացիոնալիստա-
կան գաղափարները աշխատավոր մասսաների մեջ, ուրեմն նաև
աճող սերնդի մեջ։ Մասսաների ինտերնացիոնալ կապի ամրաց-
ման ասպարիզում վճռական դեր ունեն կատարելու սովետական
դպրոցն ու ընտանիքը։ Մեր միլիոնավոր պատանիները պետք է
դաստիարակվեն պրոլետարական ինտերնացիոնալիստական դա-
շափարներով, նրանց մեջ պետք է առաջացնել անաղարտ սեր
դեպի ամբողջ աշխարհի տարբեր ազգություններին պատկանող
աշխատավորությունը։

Ավելի մեծ, պատվավոր խնդիր չկա մեր ուսուցչի և ընտա-
նիքի համար, քան աճող սերնդին լենինյան-ստալինյան ին-
տերնացիոնալիզմի ոգով դաստիարակություն տալը։ Ներկա
պայմաններում, երբ մեզ շրջապատող խոշորագույն կապիտա-
լիստական երկրները մարդկությանը փաստորեն քաշել են երկ-

ըորդ իմպերիալիստական եղբայրասպան պատերազմի մեջ, երբ
նրանք ամեն կերպ պատրաստվում են հարձակվել ամբողջ աշ-
խարհի պրոլետարիատի և աշխատավորների հայրենիքի վրա,
Սոցիալիստական պետության վրա, —առանձին կարեռություն
է ստանում մեր մանուկների մեջ ինտերնացիոնալիստական ըզ-
գացմունքների ամրացումը։ Հասկանալի է, որ միջազգային ի-
մաստով այնքան նշանակալից կլինեն մեր հաջողություններն
այդ գալիք պայքարում ընդդեմ արտաքին թշնամական ուժերի,
որքն ավելի շատ ու բեղմնավոր կերպով մենք կաշխատենք
մեր երկրում կոմունիստական դաստիարակության և պրոլետա-
րական ինտերնացիոնալիզմի գաղափարների ամրացման վրա,
որքն մեր ուսուցիչները, ծնողներն, պարտիական ու սովետա-
կան կազմակերպություններն իրենց համատեղ աշխատանքի
միջոցով մեր նոր սերնդի մեջ կարմատավորեն սովետական հայ-
րենասիրական և ինտերնացիոնալիստական գաղափարները։

Ծնողները երեխաներին մատչելի լեզվով պետք է բացատ-
րեն բուրժուազիայի ազգային քաղաքականության և փոքր
ազգերի շահագործման, կեղեքման ու իրավագրկման մասին։
Դրան հակառակ, կոնկրետ օրինակներով պետք է ցույց տալ
լենինի-Ստալինի ազգային քաղաքականության լիակատար հաղ-
թանակը, որի հետևանքով Սովետական Միության տարբեր ազ-
գերի աշխատավորներն ապրում են աղատ ու երջանիկ
կյանքով, հավասար իրավունքներով և փոխադարձ սիրո ու
օգնության պայմաններում։ Ծնողների պարտքն է՝ երեխա-
ների մեջ առաջացնել սեր ու հարգանք դեպի պազերի
երեխաները։ Համերաշխությունը, փոխադարձ օժանդակությունը
պետք է արտահայտվի երեխաների խաղի, ուսման և գրավոր
կապի միջոցով։ Կարեոր է երեխաներին ծանոթացնել Սովետա-
կան Միության տարբեր ազգերի կյանքի, պայքարի և սոցիա-
լիստական աշխատանքի հետ։ Դրա համար, պետք է օգնել երե-
խաներին կտրել թերթերից համապատասխան նկարներ և հոդված-
ներ Ուզբեկական, Վրացական, Ուկրաինական և մյուս ազգերի
կյանքի, ստեղծագործական աշխատանքի վերաբերյալ և կազմել
ալըում։ Ալըումի նյութերը երեխային հնարավորություն կտան
ծանոթանալու Սովետական Միության տարբեր ազգերի իրավա-
հավասարության, նրանց ուրախ ու երջանիկ կյանքի հետ։ Այդ

նյութերի հիման վրա, երեխան կարող է ելույթ ունենալ աշա-
կերտական հավաքույթներում, պատմել ընկերներին Ուղբեկա-
կան, Վրացական և մյուս ժողովուրդների կյանքի և աշխատանքի
մասին:

Ծնողներն երեխաների համար պետք է կարգան գրքեր,
առանձին հոգվածներ թերթերից ու նրանց հասկանալի լեզվով
պատմեն այն մասին, ինչ որ կատարվում է Սովետական հայ-
քանիքում, օրինակներով ցույց տան, թե ինչպես են պայքա-
րում մեր աշխատավորները կապիտալիզմի վերջին մնացորդները
ոչնչացնելու համար:

Մյուս կողմից ծնողները, ինչպես և բոլոր մեծահասակները
իրենց դեպի աշխատանքն ու հասարակական սեփականությունն
ունեցած աղնիվ վերաբերունքով, սովետական քաղաքացու
պարտականությունները անթերի կատարելու օրինակներով երե-
խաներին պետք է սովորեցնեն սիրել Սովետական հայրենիքը,
հարգեն սոցիալիստական սեփականությունը:

Ծնողները և ընդհանուրապես մեծահասակ սերունդը կապի-
տալիզմի, բռնության դեմ, ժողովրդի թշնամիների դեմ պայքարի
հարուստ փորձ ունեն: Ահա այդ մասին, մատչելի եղանակով,
պետք է պատմել երեխաներին՝ նպատակ ունենալով աճող սերնդին
զինել մեծ ատելությամբ դեպի կապիտալիզմը, դեպի ազգերի
ստրկացումը և ընդհանուրապես դեպի շահագործումը:

Դաստիարակչական մեծ նշանակություն ունի ռեռլուցիոն
տոների լավ կազմակերպումն ընտանիքում: Պետք է հասարակու-
րություն տալ, որ տոնի կապակցությամբ երեխան զարդարի
իր անկյունը, պետք է նրան ծանոթացնել տոնի նշանակության
հետ, պատմել հուշեր տոնի կապակցությամբ:

ԽՆՉՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՄԵԶ ԶԱՐԴԱՑՆԵԼ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ

Ազնվությունը, անկեղծությունը և ճշգալառությունը երե-
խայի վարքի ամենալավ գծերն են: Մեր ծնողները, երեխային
շրջապատող սովետական հասարակությունը մեծ նշանակորու-
թյուններ ունեն աճող սերնդի մեջ այդ հատկությունները զար-
գացնելու համար: Սակայն, թող ներվի ասել որ մեր ծնողներից
ոմանք այդ խնդրի վրա ուշադրություն չեն դարձնում: Ավելին,

առանձին դեպքերում, որոր ծնողներ իրենց վարմունքով օգնում
են երեխայի մեջ ոչ ցանկալի հատկությունների զարգացմանը:
Այդ պատճառով սուս խոսելու, գողություն անելու, կոպտելու,
ծեծելու, հարբելու և փողոցային հայրոյանքներ տալու դեպքերը
դեռ իսպառ չեն վերացել մեր երեխաների որոշ մասի միջից:

Երեխաների մեջ աղնվություն դաստիարակելու հարցում
մեծ նշանակություն ունի ծնողների ու շրջապատի մարդկանց
ճշմարտասիրությունը, ուղղամտությունը և ազնվությունը: Եթե
երեխան իր գողացած իրը վաճառքի է հանում և նրան հանդիպած
քաղաքացին զգալով, որ վաճառվող իրը գողացված է, այնուա-
մենայնիվ գնում է, ապա վերջինս իր արարքով երեխային խրա-
խուսում է նոր, ավելի ծանր հանցանքներ կատարելու: Այսուհետև,
ծնողներն ընդհանրապես երեխաներին խոստումներ չպետք է շույ-
լեն, իսկ որևէ բան խոստանալիս պետք է անպատճառ կատարել,
այլպես նա կհիմաթափվի և այլևս չի հավատա ծնողներին: Այդ
դեռ քիչ է. երեխան, օրինակ վերցնելով, կակի սուս խոսել և խարել
ծնողներին, նվազա միանգամայն հասկանալի է, որովհետո երեխա-
ները սուս խոսելը, խարելը, գողանալը և այլ հակահասարակական
արարքները սովորում են շրջապատից, ծնողներից: Այդպիսով՝ երե-
խաների հետ աղնիվ լինելը, նրանց տեղին պահանջները ժամա-
նակին կատարելը, երեխաների նկատմամբ խորհրդատուի դերում
մնալը—լավագույն միջոցներն են երեխաների մեջ ազնվության,
ճշմարտասիրության հատկանիշների արմատավորման համար:

ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային իրական հարաբերությունների ստեղծումը
մարդկանց միջև հնարավոր է կապիտալիզմի ոչնչացման և մարդու
շահագործումը մարդու կողմից արմատապես լիկիդացիքայի են-
թարկելու պայմաններում: Սոցիալիստական հումանիզմը — դա
դեպի աշխատավորը ուշադիր վերաբերմունքի, սիրո և հարգանքի
դաստիարակությունն է: Պարզ է, որ սովետական դպրոցն ու
ընտանիքը միացյալ ուժերով երեխաների մեջ պետք է զաստիա-
րակեն փոխադարձ սիրո և համերաշխության զգացումներ, պետք
է նրանց մեջ զարգացնել կոլեկտիվիտական սկզբունքներ, որ-

պեսզի նրանք կարողանան իրենց մասնավոր շահեւը դուզակցել հասարակական գործի շահերին:

Երեխաների մեջ փոխադարձ սիրո և համերաշխության զգացումներ զարգացնելու հարցում խոշոր պարտականություններ ունեն ծնողները, սովետական հասարակայնությունը: Նախ, ծնողներն, իրենց մարդասիրական, դեպի աշխատավոր մարդն ունեցած սիրո և հարգանքի զգացումներով, երեխաների համար պետք է դառնան կենդանի, վառ օրինակներ:

Բացի այդ, երեխաների մեջ փոխադարձ օգնության և սիրո զգացումների զարգացման համար ծնողները պետք է բարձրացն կարդան օրաթերթերի և ամսագրերի այն հոգվածները, որոնք խոսում են սովետական մարդասիրության, դեպի մարդն ուշադիր և հոգատար վերաբերմունքի մասին: Թերթեր կարգարուց հետո, ծնողները պետք է կազմակերպեն փոքրիկ գրույցներ, որի ընթացքում ցույց տան երեխաների փոխադարձ հարգանքի և ընկերասիրության հասկացողություններում եղած ճիշտ և անճիշտ կողմերը:

Այդ տեսակետից պակաս նշանակություն չունի նաև, ծնողների հետ միասին ներկայացումների դիտումը: Օրինակ՝ «Հրացանավոր մարդը», «Ի՞նչպես է կոփվում պողպատը», «Բարեկամություն» և այլն պիեսների դիտումից հետո, ծնողներն առանձին կենդանի կերպարների միջոցով երեխաների մեջ պետք է պարզաբանեն և զարգացնեն փոխադարձ մտերմության և սիրո էությունը:

Շատ անգամ երեխան իր մոտ է հավաքում իր ընկերներին, միասին հաջորդ օրվա գասերը պատրաստելու: Անհրաժեշտ է, որ ծնողն իր երեխայի ընկերներին հարգի, կիրթ ու սիրալիր վերաբերմունք ցույց տա, որպեսզի իր օրինակով սովորեցնի երեխաներին, թե ինչպես պետք է միմյանց նկատմամբ լինել քաղաքավարի և մտերմական:

Եվ, վերջապես, երեխաներին պետք է դաստիարակել աշխատավորության մեծ հումանիստներ՝ լենինի, Ստալինի փայլուն օրինակներով՝ որպեսզի երեխաները լինեն անողոք աշխատավորների թշնամիների նկատմամբ, սիրեն սովետական հայրենիքը, սիրեն ու հարգեն մեծերին և ընկերներին, լինեն անընկելի կոլեկտիվիստներ:

Եթենաթի Գեղըրվեստակը ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների ուսուցման և կոմունիստական դաստիարակության սիստեմի մեջ կարեղ տեղ է գրավում նաև գեղարվեստական ճաշակի և ունակությունների զարգացումը: Մեր պարտիան մեծ ուշագրություն է դարձնում աճող սերնդի գեղարվեստական դաստիարակության վրա: Բացի դպրոցում տարվող գեղարվեստական դաստիարակությունից պետք է գործադրել բազմաթիվ այլ միջոցառումներ: Հենց այդ պատճառով վերջին տարիների ընթացքում բացվել են բազմաթիվ մանկական թատրոններ, կինոներ, պիոններ պալատներ, գրադարաններ, երաժշտական և պարի դպրոցներ, որոնք հսկայական աշխատանք են կատարել ու պարտավոր են կատարել մեր երեխաների մեջ գեղարվեստական և կուլտուրական ունակություններ դաստիարակելու բնագավառում:

«...Պետք է հարպուրիչ, գեղեցիկ և կենդանի ու հետաքրքիր դարձնել երեխաների կյանքը. այդ է և ընտանիքի, և դպրոցի, և հասարակության խնդիրը. դրան պետք է ծառայեն գրականությունը, արվեստը, մանկական թատրոններն ու կինոները»:

(«ՊՐԱՎԴԱ»)

Մեր գպրոցի, ընտանիքի և հասարակության կարևորագույն խնդիրն է՝ գեղարվեստական երկերի ընթերցանությունը դպրոցականների համար պահանջ դարձնել: Սա կարեղ է, որովհետեւ գեղարվեստական կիրքը զարգացնում է դպրոցականի ճաշակը, հարստացնում է բառապաշտը, ստեղծում է նրանց մեջ վառ հուզականություն, ծանոթացնում է մարդկության կուլտուրայի և գասակարգային պատմության հետ և զարգացնում է սովետական հայրենասիրության ողին: Գեղարվեստական գիրքը զարգացնում է նաև երեխայի նախաձեռնությունը, օգնում է գրականության հիմունքներին տիրապետելու գործին և լայնացնում է դպրոցականի աշխարհայացքը:

Սովետական ուսուցիչն ու ընտանիքը երեխայի մեջ պետք է դաստիարակեն սեր և հետաքրքրություն գեղի գեղարվեստական գրքի ընթերցանությունը: Այդ բանին հնարավոր է հասնել երեխաների համար փոքրիկ, բայց հետաքրքիր դրական պատմը:

վածքների ընթերցանության և զրույցների կաղմակերպման միջոցով:

Կասկածից, վեր է, որ երեխային չի կարելի ամեն գիրք հանձնարարել կարգալու: Երբեմն երեխան դառնում է անկարգապահ, վատ սովորող, անուշադիր և նույնիսկ անտրամադիր՝ իր տարիքին և հասկացողություններին անհամապատասխան երկերի ընթերցանության պատճառով, Պարզ է, որ երրորդ դասարանի աշակերտները Պուշկինի «Կապիտանի աղջիկը» կամ Շիրվանզագերի «Թառուղ» կարդալով, ոչ միայն չեն հասկանա, այլև մեծապես կլինապվեն:

Կնշանակի, երեխայի գիրքը պետք է ընտրվի այնպես, որ իր բովանդակությամբ ու պարզությամբ հասկանալի և օգտակար լինի դպրոցականին:

Այստեղ անշուշտ մենք հնարավորություն չունենք բերել երեխաների տարիքի ու հասկացողություններին համապատասխան գիղարգեստական երկերի անվանացուցակը, սակայն խորհուրդ ենք տալիս այդ գործը կազմակերպել դպրոցի օգնությամբ:

Երեխան իր ընթերցանության գիրքը կարող է ձեռք բերել դպրոցի, շրջանի կամ քաղաքի գրադարաններից, սակայն ծնողները երեխաներին պետք է խրախուսեն իրենց սեփական գրադարանն ունենալու: Այժմ մեր բանվորները, կոլտնտեսականներն ու ծառայողները լայն հնարավորություն ունեն երեխաների համար գրքեր գնելու: Պուշկինի, Տուրտոյի, Տուրգենևի, Չեխովի, Մայակովսկու, Մաքսիմ Գորկու, Հ. Թումանյանի, Շիրվանզագերի և մյուս բազմաթիվ կլասիկ գրողների երկերը մեր դպրոցականի գրադարանի հիմքը պետք է կազմեն: Դպրոցականներն ավելի խորը պետք է ծանոթանան Մարքսի-Էնգելսի-Լենինի և Ստալինի մատչելի աշխատություններին:

Ծնողները ոչ միայն պետք է գնեն երեխաների համար համապատասխան գրքեր, այլև պետք է հետեւ, պետք է օգնեն, որ նա կարդացած գրքի բովանդակությունը լրիվ չափով հասկանա, կարողանա սեղմ կերպով վերարտադրել և գտնել գրքի մեջ եղած գեղեցիկը, լավը:

Երեխաների գեղարվեստական դաստիարակության ասպարեզում կարենը նշանակություն ունեն նաև կինոն, թատրոնական ներկայացումները, երգի ու պարի երեխոները: Ինչպես երե-

խային չի կարելի ամեն գիրք հանձնարարել կարգալու, այնպես էլ չպետք է թույլ տալ նրան իր տարիքին ու գիտելիքների պաշարին անհամապատասխան կինո նկարներ և թատրոնական ներկայացումներ դիտելու:

Դպրոցն—ինչպես և ընտանիքը նախօրոք պետք է ծանոթանան կինո նկարի, այս կամ այն ներկայացման բովանդակությանը, պարզեն նրա գիտական, դաստիարակչական նշանակությունը, և հետո, երբ ներկայացումը երեխայի համար օգտակար կճանաչվի, նոր միայն կարելի է թույլ տալ դիտելու: Լավ կինո նկարը, թատրոնը և արվեստի մյուս ձեերը երեխաների համար հանդիսանում են զորեղ միջոցներ նրանց հասարակական-քաղաքական դաստիարակության բնագավառում: Կինոյում կամ թատրոնում երեխան տեսնում է մեր Սովետական Միության ներուսական առօրյան, ժողովրդի ծոցից դուրս եկած հարյուրագարավոր տաղանդավոր, կենինի-Ստալինի մեծ գործին իրենց կյանքով ու աշխատանքով նվիրված սովետական մարդկանց: Ահա այս բոլորը կազմակերպում են մեր երեխաների միտքն ու կամքը, ունողուցիոն գոնոնությունը, նվիրվածությունը, աղնվությունն ու հայրենիքին անդավաճան ծառայելու գաղափարն ու զգացումը:

Սովետական կառավարությունը մեր երջանիկ երեխաների կրթության, դաստիարակության և առողջության համար ստեղծել է բոլոր անհրաժեշտ պայմանները: Սովետական ընտանիքի նյութական-կուլտուրական պայմանների անընդհատ վերելքը՝ նոր, ավելի բարձր աստիճանի հասցըց երեխայի լիարժեք դաստիարակության և առողջապահության պայմաններն ու միջոցները: Ունենալով այդ հնարավորությունները, սովետական հասարակությունն ու ընտանիքը պարտավոր են մեր երեխաներից դաստիարակելու մի սերունդ, որ կարողանա արժանավայել կերպով փոխարինել այն հերոսական սերնդին, որն ապահովեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ունողուցիչայի հաղթանակը և վերջ գրեց մարդու շահագործմանը մարդու կողմից:

ԵՐԵՒԱՅԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխայի առողջությունը և ֆիզիկական դաստիարակությունը պետք է լինի ընտանիքի ուշադրության կենտրոնում, որովհետև առողջությունն ապահովում է երեխայի հաստատակամությունը մի կողմից և հաջող պայքարը վարակիչ հիվանդությունների դեմ մյուս կողմից: Ընտանիքը հանդիսանալով երեխայի ֆիզիկական դաստիարակության հիմնական օջախը—անպայման պետք է գիտենա այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են երեխայի նորմալ աճան ու զարգացման համար:

Այնից առաջ ընտանիքը պետք է լավ ծանոթ լինի դպրոցի կամ մանկապարտեղի օրվա ուեժիմին, որպեսզի երեխայի համար մնացած աղատ ժամանակը կարողանա ճիշտ դասավորել Կասկածից վեր է, որ երեխային դպրոցից բացի, որոշ հանձնարարություններ տրվում են նաև ընտանիքում, սակայն թե դպրոցի և թե ընտանիքի հանձնարարությունները չպետք է գերազանցին երեխայի ուժեղից:

Երեխային անհրաժեշտ հանդիսավոր, քունը, խաղը և ուսումնական, տնային հանձնարարությունները կատարելու համար անհրաժեշտ ժամանակը դասավորելու նպատակով ընտանիքը պետք է կազմի երեխայի տնային ուեժիմը, որը պետք է համաձայնեցված լինի երեխայի ուսումնական հիմնարկի ուեժիմի հետ:

Ընտանիքում ծնողները ամեն կերպ պետք է աշխատեն ճիշտ պահանձել օրվա ուեժիմը, որովհետև երեխայի ժամանակի ամրացված բաշխման խախտումը անպայման բացասարար է անդրադառնում երեխայի հանգստի, ներվային սիստեմի և ընդհանուրագիս առողջության վրա: Խնչպես ընտանիքի հասակավոր անդամները աշխատանքից տուն վերադառնալով կարիք են զգում հանգստանալու և հանգստանում են, նույն կերպ էլ փոքրահասակները, որոնք իրենց հասակի համեմատ ավելի քիչ էներգիա չեն ծախսում, պետք է հանդստանան և հնարավորություն ունենան վերականգնելու իրենց սպառած էներգիան:

Երեխայի հանգստի և առողջության համար կարևոր նշանակություն ունի երեխայի կանոնավոր և հանգիստ քունը: Երեխայի քննելու տեղը պետք է լինի մաքուր, արեսու և լուսու երեխայի

անկողինը ամեն օր պետք է օդափոխել, իսկ 10 օրը մեկ փոխել սպիտակեղենը: Ծնողները երեխաներին պետք է սովորեցնեն քնելուց առաջ լավ լվանալ երեսը, ձեռքերն ու ոտքերը: Բացի այդ, երեխայի քնելուց մեկ ժամ առաջ չպետք է թույլատրել նրան մեծ լարվածություն պահանջող մտավոր աշխատանքով զբաղվել կամ ձեռնարկել աղմկոտ խաղի, քանի որ դրանք անհանգստացնում են երեխայի ներվային սիստեմը: Ընդհակառակը, շատ լավ կլինի, որ այդ ժամանակամիջոցում նաև կարդա կամ լսի պատմվածքներ և կարձ զրույցներ:

Ծնողները պետք է հետեւն, որ առավոտները երեխան արթնանալիս անմիջապես վեր կենա անկողնուց և մինչև լվացվելը կատարի ֆիզիկական վարժություններ: Ֆիզիկական այդ վարժությունները պետք է ապահովեն երեխայի գլուխի, ձեռքերի, ոտքերի և ամբողջ մարմնի աստիճանական մարզումը: Բացի այդ, լվացվելու ժամանակ երեխան պետք է սառը ջրով կուրծքը շփի: Ծնողները պետք է ճիշեն, որ երեխայի ֆիզիկական ճիշտ դաստիարակությունը վճռական նշանակություն ունի նրա աճող օրգանիզմի նորմալ ձևակորման և առողջության ամրացման վրա: Ֆիզկուլտուրան երեխաների մեջ զարգացնում է արագաշարժություն, ձկունություն, զիմացկունություն և բարձրացնում է երեխայի ուժն ու կենսուրախությունը: Ֆիզկուլտուրան բարձրացնում է երեխաների ակտիվությունը, համարձակությունը և հնարավորություն է տալիս արագ կողմնորոշվելու այս կամ այն հարցում: Ֆիզիկական կուլտուրան երեխաների մեջ արմատավորում է կազմակերպվածություն, գիտակցական կարգավահություն, ընկերականություն, կոլեկտիվիզմ և խորացնում է հասարակական պարտքի ու պարտավորությունների կատարման գգացումը:

Ծնողները երեխաների համար պետք է ձեռք բերեն լիֆաներ, չմուշկներ, սահնակներ, գնդակներ և այլ խաղալիքներ, որպեսզի երեխաները աղատ ժամերին հնարավորություն ունենան խաղալու: Շատ ծնողներ երեխաների խաղին կարենություն չեն տալիս և այն դիտում են, որպես ժամանակի ավելորդություն ունենան վերականգնելու իրենց սպառած էներգիան:

մաղատասկան խաղերը, ոչ միայն երեխային հանգստություն
են պատճառում, այլ և հանդիսանում են նրա ընդհանուր դաս-
տիարակության մի կարևոր օղակը երեխայի համար խաղից ոչ
պակաս կարենություն ունեն նաև զբոսանքները: Եթե երեխան
փոքր է, ապա պարզ է, որ նրա զբոսանքը պետք է կազմակերպվի
ծնողների օգնությամբ, իսկ մեծերը՝ կարող են զբոսանքի դուրս
գալ և առանձին: Այդ զբոսանքները կարելի է կազմակերպել
որոշ նպատակով ու պահանջներով: Օրինակ՝ հավաքել և կազմել
բույսերի և միջատների կոլեկցիաներ, ուսումնասիրել բնության
փոփոխությունները տարբեր եղանակներին և այլն:

Ծնողները անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնեն
նաև երեխայի հագուստի առողջապահության վրա: Երեխայի
հագուստը պետք է լինի մաքուր, առանց պատովածքների և նրա
աղատ շարժումներին չխանդարող: Պետք է պահանջել, որ երե-
խան ամեն օր փոշուց ու կեղտից մաքրի իր հագուստն ու կո-
շիկները, լինի ակնուրատ, քնելիս հագուստը կանոնավոր ծալած
դնի աթոռի վրա և ոչ թէ շաղ տա սենյակով մեկ, ինչպես այդ
արգում է շատ ղեղքերում:

Առանձնապես կարեոր է երեխայի մաքրասիրության դաս-
տիարակությունը: Ընտանիքում երեխան պետք է ունենա առանձ-
ին երեսսրբիչ, օճառ, ատամի խողանակ և փոշի: Նա ամեն առավոտ
օճառով պետք է լվանա երեսը, ձեռքերը ականջներն ու վիզը:

Ծնողներն առանձնապես մեծ ուշադրություն պետք է դարձ-
նեն երեխայի ձեռքերի մաքրության վրա: Պետք է կարգ մոցը-
նել, որ երեխան ուտելուց առաջ և հետո լավ լվանա ձեռքերը:
Չեռքերը պետք է լվանալ նաև զուգարանից դուրս գալուց,
ինչպես և յուրաքանչյուր անզամ կեղտառութելուց հետո: Նույնպիսի
կարենություն ունի նաև մաշկի կանոնավոր խնամքը: Շաբաթը
մեկ անգամ երեխային պետք է բաղնիք ուղարկել կամ տաք
ջրով և օճառով լողացնել տանը: Այդ նույն ժամանակ պետք է
կտրել երեխայի ոտքերի ու ձեռքերի եղունգները: Ավելի հաճախ
պետք է լվանալ երեխայի ոտքերը, իսկ ամառվա ամիսներին՝
ամեն օր: Ծնողները պետք է հետեւն նաև երեխայի գլխի ու
մազերի մաքրությանը: Ժամանակին անհրաժեշտ է կտրել երե-
խայի մազերը և պահանջել երեխայից, որ նա ակնուրատ կեր-
պով հետեւի իր մազերին և միշտ սանրած պահի: Երեխան պետք

է հետեւի նաև իր ատամների մաքրությանը: Ամեն օր ատամները
խողանակով և ատամի փոշիով մաքրելը երեխայի համար պետք
է կենցաղ դառնա: Ավելի նպատակահարմար է ատամները լվա-
նալ երեկոները—քներուց առաջ, որպեսզի ատամների արանգում
մնացած մսի կամ այլ կերակրի մնացորդները միկրոբների բուն
չղառնան և չփչացնեն ատամները:

Երեխայի կենցաղում սան-դիգիւնիկ ունակությունների դաս-
տիարակության ասպարիզում կարեոր նշանակություն ունի նաև
ծնողների անձնական լավ օրինակը: Ծնողները, ինչպես և ըն-
տանիքի բոլոր մեծահասակները պետք է լինեն ակնուրատ և
մաքուր հագնված: Պետք է մաքուր պահել նաև բնակարանը,
տնային իրերը գասավորել կանոնավոր, ճաշակով, —այլապես բնա-
կարանի և ծնողների թափթփվածությունը կարող է վատ օրինակ
հանդիսանալ երեխայի համար:

Վերջապես, ծնողները միշտ պետք է հիշեն և պարտավոր են՝
ա) Սովորեցնել երեխային արթնանալուց հետո անմիջապես
վերկենալ:

բ) Ինքնուրույն հագնվել.

գ) Հաճախակի օդափոխել սենյակը.

դ) Հետեւել, որ երեխան սառը ջրով շփի կուրծքը, մաքուր
լվանա ձեռքերը, աչքերը, քիթը, ականջները, երեսը, ատամները:

ե) Տրամադրել երեխային առանձին երեսսրբիչ և օճառ,
ատամի փոշի և խողանակ:

զ) Միշտ հիշեցնել, որ երեխան լվացվի ուտելուց առաջ և
հետո, ինչպես և զուգարան գնալուց հետո:

է) Քնեցնել երեխային առանձին և ժամանակին: Երեխայի
հանգիստ քունն ապահովիլու նպատակով խուսափել բարձր խո-
սելուց և աղմուկ հանող աշխատանքից.

ը) Զերք բերել երեխայի համար մանկական պատկերադարդ
գեղարվեստական գրականություն, հաճախ զրույցներ կազմակեր-
պել զանազան հետաքրքրական նյութերի շուրջը:

թ) Հաշվի առնել երեխայի տարիքային առանձնահատկու-
թյունները և գնել ֆիզիուլու գործիքներ ու զանազան խաղալիք-
ներ: Հետեւել, որ երեխան առավոտները կատարի ֆիզիկական
անհրաժեշտ վարժություններ:

ժ) Երեխային դպրոց ուղարկել մաքուր հագնված և պա-
հանջվող զրնական-դասական պիտույքներով:

ժամանակ լինել՝ կպրոցում և հետաքրքրվել երեխայի ուսման աշխատանքներով: Խորհուրդներ ստանալ զաստիարակ ուսուցչեց, երեխայի արտադասարանային կյանքն ավելի հաջող կազմակերպելու համար:

Ժբ) Երեխաներին տանել զբոսանքի, մանկական կինո և թատրոն:

Ժգ) Ժամանակին կերակրել երեխային և հետեւ որ նա տան ռեժիմի բոլոր պահանջները կատարի ճշտությամբ:

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սովետական իշխանությունն իր գոյության քսաներեք տարիների ընթացքում հակայական հաջողություններ է ձևաբ բերել սոցիալաստական շինարարության և կուլտուրական ումվոլոցիայի բնագավառում: Փոխվել է մեր երկրի դեմքը, փոխվել են և մարդիկ: Ընդգծելով մեր հաջողությունները ժողովրդական տնտեսության և աշխատավոր ժողովրդի կոմունիստական դաստիարակության ասպարեզում, այնուամենայնիվ մենք չպետք է մոռանանք հնից մնացած սովորությունների և հատկապես կրոնական հասկացողությունների դեմ պայքարի անհրաժեշտությունը:

Ինչպես զգողոցը, նույնպես և սովետական ընտանիքը, հաստուկ ուշադրություն պետք է նվիրեն երեխաների հակակրօնական դաստիարակության գործին: Շատ ուսուցիչներ և ծնողներ դժում են, որ եկեղեցիները չեն գործում, կրոնական տոները չեն տոնվում, տերտերները լրել են, ապա էլ ի՞նչ կարիք կախուել երեխաների հակակրօնական դաստիարակության մասին: Այսպես մտածելը ճիշտ չէ: Մեր կարծիքով այդ բնագավառում գեռ շատ անելիքներ կան: Նախ՝ հոգևորականների և նրանց աղողեցության տակ գտնվողների մնացորդները օգտագործում են ամեն մի հարմար առիթ երեսց սկ գործը կատարելու համար, երկրորդ՝ գեռ կան ծնողներ, որոնք խոսակցության ընթացքում գործ են ածում «աստված վկա», «աստված քեզ օգնի», «մեղատեր», «աստված ողորմած է», «նա սուրբ մարդ է, զողություն չի անի» արտահայտությունները: Այդ զարձվածքներն երեխաները հաճախ լսում են ընտանիքում և իրենք էլ սկսում են գործածել: Այսպիսով երեխայի մեջ ամրանում է այն միտքը, թե

կոյություն չունենող աստվածներն ու սրբերն ամենակարող ուժեղն են: Առանձին ծնողներ երեխաներին վախեցում են զանազան կենդանիների ու չարքերի անուններ տալով: Օրինակ՝ «Սուրբիկ», չարություն մի անի, այ, պառավը կգա, քեզ մհջոկի մեջ կցցի, կտանի», «Շատա քնիր, թե չէ շանը կկանչեմ» կամ երեխաներին պատմում են զանազան հակագիտական հեքյաթներ չարքերի, սատանաների մասին: Դաստիարակության նման կարգի երեւլութները երեխաներին դարձնում են վախկոտ ու թույլ: Նման դաստիարակության հետևանքը պետք է համարել չ. Թումանյանի լոռեցի Սաքոն, որին տատի պատմած հեքյաթային չարքերը հանգիստ չէին տալիս: Ավելին կարելի է ասել: Շատ ծնողներ երեխաների դաստիարակության գործը հանձնում են վախկոտ ու թույլ: Նման դաստիարակության հետևանքը պետք է համարել չ. Թումանյանի լոռեցի Սաքոն, որին տատի պատմած հեքյաթային չարքերը հանգիստ չէին տալիս: Ավելին կարելի է ասել: Շատ ծնողներ երեխաների դաստիարակության գործը հանձննում են ընտանիքի ավելի տարիքավոր անդամներին: Վերջիններս էլ երեխաներին իրենց հետ քաշ են տալիս զանազան սրբավայրեր, կրոնական տոններին երեխաներին ներկած ձվեր են տալիս և այլն: Այս երկույթները երեխաների միտքը մթագնելուց բացի այլ հետևանք ունենալ չեն կարող:

Սովետական ընտանիքը պարտավոր է երեխաներին տալ հակակրօնական դաստիարակություն, մի դաստիարակություն, որը երեխային տալիս է մտավոր զարգացման լայն հնարավորություններ:

Երեխայի հակակրօնական դաստիարակության հարցում, ծնողները կարող են գործադրել բազմաթիվ ձևեր: Նախ հարկավոր է երեխային աղատել վերևում հիշված հին կենցաղից մնացած հասկացողությունների աղեղցություններից:

Այնուհետև, անհրաժեշտ է երեխային հասկանալի լեզվով պատմել կրոնի և կրոնական հասկացողությունների հակագիտական լինելը: Նույն այդ նպատակով երեխաների համար անհրաժեշտ է կարգալ հակակրօնական բնույթի գեղարվեստական պատմվածքներ:

Լավ կլինի, որ երեխաներին մասնակից դարձնել հակակրօնական կինո-ցուցադրումներին, ծանոթացնել հակակրօնական թանգարանների աշխատանքների հետ և մերկացնել եկեղեցիական տոնների բուրժուական իմաստը:

ԵՐԵԽԱՅԻ ՍԵՒԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների կրթության և դաստիարակության բազմաթիվ հարցերի հետ սերտ կապված է նաև նրա սեռական դաստիարակությունը: Երեխայի աճման ու զարգացման հետ աստիճանաբար զարգանում են նաև նրա սեռական զգացումները և աստիճանաբար փոխվում է նրա վերաբերմունքը դեպի հակառակ սերին պատկանող մարդիկ:

Երեխայի մեջ զարգացող սեռական զգացումները շատ հաճախ ստիպում են նրան զանազան հարցերով դիմել առաջին հերթին ծնողներին: Բիշ չեն գեղագերը, երբ երեխաներին հետաքրքրություղ այս կարգի հարցերին ծնողները չեն պատասխանում կամ գիտակցաբար ոչ ճիշտ պատասխաններ են տալիս, որի հետևանքով երեխաների մեջ մնում է անորոշություն և տարակուսանք իրեն հետաքրքրող հարցերի նկատմամբ: Ծնողների այսպիսի վարձունքը ճիշտ չէ և անպայման մնասակար ազդեցություն է թողնում երեխաների վրա:

Նախ, երեխայի հարցին պատասխան չտալով, ծնողները ստիպում են նրան իր հարցի պատասխանը ստանալ այլ, ոչ մաքուր աղբյուրներից, իսկ երեխայի հարցին ոչ ճիշտ պատասխան տալիս—ծնողները կորցնում են իրենց հեղինակությունը երեխաների մոտ և վերջիններիս մղում են սեռական հիվանդու կյանքի մեջ: Վերցնենք մի օրինակ, որը բերված է Նելիի «Մայրը և երեխաները» գրքույկում:

—Մամա, որտեղից են վերցնում փոքրիկ երեխաներին,—հարցը գոքրիկ ֆրիցը:

Մայրը մի ըսպե շփոթվեց երեխայի տված հարցից, բայց և այնպես հարցի պատասխանը պատրաստ էր:

—Փոքրիկ երեխաներին բերում է արագիլը,—ասաց մայրը:

—Իսկ որտեղից է վերցնում նրանց արագիլը:

—Զընորից, զըն միջից:

—Այնտեղ երեխաները չեն մրսում:

—Ոչ:

—Նույնիսկ ձմեռը:

—Այս:

—Բայց մվ է նրանց կերակրում:

—Դե վերջ տուր քո հարցերին,—բարկանում է մայրը:
Երեխան, իհարկե, լուսամ է, սակայն դեռ շատ հարցեր ուներ տալու:

Այս խոսակցությունից մի երկու օր հետո, դպրոցում ուսուցիչը, գասի կապակցությամբ, երեխաներին պատմում է արագիլի մասին, որը հրդեհի ժամանակ չկարողանալով իր ձագերին բնից տեղափոխել ինքն էլ այրվում է նրանց հետ:

—Բայց չէ՞ որ արագիլը փոքրիկ երեխաներ է բերում. այդ ինչպես է, որ չի կարողացել իր սեփական ձագերին աղատել հրդեհից,—բացականչում է փոքրիկ ֆրիցը:

Ուսուցիչը հասկանալով բանի էությունը և չցանկանալով նսեմացնել մոր նկատմամբ երեխայի ունեցած վստահությունը, պատասխանում է.

—Այդ արագիլներն ուրիշ ցեղից են, սովորական արագիլները այդքան ուժեղ չեն:

Դասամիջոցին դասարանի համեմատաբար տարիքով երեխաները հավաքվում են Ֆրիցի ուրիշ և հայտնում իրենց զարմանքը նրա միամտության և պարզամտության վրա:

Ֆրիցն իր ընկերների միջոցով իմանում է իրեն հետաքրքրություղ հարցերի ճիշտ պատասխանը և զայրացած մոր վրա վերադառնում է տուն:

—Մամա, ճիշտ չէ, որ արագիլի մասին քո ասածը միայն պատմություններ են և ես գուրս եմ եկել քո մարմնի միջից:

Մայրը խիստ զարմացած հարցնում է.

—Ա է մասին քեզ ով է պատմեր:

Ֆրիցը մորը պատմում է բոլորը: Մայրը, նույնիսկ այս դեպքում, չցանկացավ երեխայի հարցերին ճիշտ պատասխաններ տալ և մյուս կողմից սպառնաց, որ երեխան այլևս այդպիսի հիմար հարցերով իրեն չդիմի: Ֆրիցն, իհարկե, այլևս տանը այդպիսի հարցերի մասին չէր խոսում: Երեխան թողեց մոր նկատմամբ ունեցած իր վստահությունը և իրեն հետաքրքրությունը հարցերի մասին հարցնում և տեղեկանում էր էլ ընկերներից, և այն էլ ավելի այլանդակութեալի մասն էր կերեխաների համար:

Այս օրինակը շատ բնորոշ և պարզ կերպով ցույց է տալիս,

թե երեխաների սեռական դաստիարակության հարցում ծնողների անտարբեր վերաբերմունքը և ոչ ճիշտ պատասխաններ տալը ինչպիսի վիճակի է հասցնում երեխաներին:

Կարելի է ավելին ասել: Իր հարցերի պատասխանները վերցնելով պատահական, կեղուոտ աղբյուրներից, հետեւլով փողոցային, փչացած երեխաների օրինակին, կարդալով իր տարիքին անհամապատասխան գրքեր, դիտելով ոչ ցանկալի նկարներ, երեխայի մեջ մեծանում են սեռական զգացումները, նա հետաքրքրվում է իր սեռական օրգաններով և դիմում է օնանիդմի. իսկ օնանիդմը երեխաներին տալիս է անառողջ կերպարանք, թուլացնում է նրանց ֆիզիկական և մտավոր զարգացումը: Այդպիսի երեխաներից շատերը ձեռք են բերում նաև սեռական թուլություն: Հարկավոր է հիշատակել, որ ծնողների և շրջապատի հանցանքով փոքր հասակից իր ուժերը նման վատ ձևով ծախսելով երեխան ի վիճակի չի լինի հետագայում լինել մեր երկրի հերոս օդաչուների, արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի առաջավորների շարքերում:

Ինչպես տեսնում ենք, երեխայի հարցերին չպատասխանելը, ինչպես և այդ հարցերին սխալ պատասխաններ տալը մնասում է երեխայի սեռական կյանքի ճիշտ դաստիարակության գործին:

Ուրեմն անհրաժեշտ է բոլոր դեպքերում երեխայի բոլոր հարցերին տալ ճիշտ պատասխաններ:

ՀՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ երեխաներն իրենց աճման ու զարգացման տարիներում ընդօրինակում են մեծահասակների բնավորության թե բացասական և թե դրական գծերն, ինչպես և նրանց շարժումները: Հասկանալի է, որ ընտանիքի և հասակավոր քաղաքացիների կենցաղը՝ նրանց փոխհարաբերություններն իրենց արտահայտությունն են գտնում նաև երեխաների մեջ, Սովետական ընտանիքը, նյութական և կուլտուրական բարձր մակարդակի վրա գտնվելով, ստացել է բոլոր հնարավորությունները լավագույն պայմանների մեջ դնելու երեխայի դաստիարակության գործն ընդհանրապես և նրա սեռական դաստիարակության գործը՝ մասնավորապես:

Սակայն գեռ կան ընտանիքներ, որոնց կենցաղը, փոխհարաբերությունները, վարքն ու բարքը, երեխաներին հրում են սեռական այլանդակ կյանքի մեջ: Առանձին ընտանիքներում, նույնիսկ համեմատաբար կուլտուրապես զարգացած ընտանիքներում, երեխաներին քնացնում են նույն սենյակում, որտեղ քնում են նաև ծնողները, իսկ առանձին գեղպէրում նաև մեծահասակների հետ մի մահճակալում: Այսպիսի պայմաններում, անշուշտ երեխան ականատես կիննի այնպիսի երկույթների, որոնք նրա մեջ առաջ կրերեն սեռական կյանքի վաղաժամ զգացումներ: Փոքր չեն նաև այն գեղպէրը, երբ հայրը կամ մայրը երեխաներին իրենց հետ ընդհանուր լողարան են տանում: Միամտությունն կիննի ասել, որ փոքրիկ երեխան բաղնիքի ընդհանուր լողարանում իրեն անտարբեր կպահի և չի հետաքրքրվի լողացող մեծահասակների մարմնական առանձնահատկություններով:

Ուրեմն հասկանալի է, որ երեխաներին և ոչ մի դեպում մեծերի հետ միենանույն անկողնում չպետք է պառկեցնել և չպետք է տանել ընդհանուր լողարան: Անհրաժեշտ է նաև խուսափել երեխաներին գրգռիչ ուտելիքներ (թթու, կծու, աղի, ոգելից խմիչքներ) տալուց, երեկոները երեխային քիչ պետք է ուտեցնել, որպեսզի նա հանգիստ քնի, իսկ հանգիստ քունը հնարավորությունն չի տա ուշագրություն դարձնել շրջապատում կատարվածի վրա:

Շատ դեպքերում ծնողները ոչ մի կարեռություն չեն տալիս երեխայի ներկայությանը, ենթադրում են, որ նա գեռ բան չի հասկանում կամ ուղղակի արհամարհում են նրա ներկայությունը և թույլ են տալիս անթույլատրելի խոսակցություն—գոհեհիկ հայհոյանքներ և նույնիսկ այնպիսի երկույթներ, որոնք անհանգստացնում են երեխայի միտքը ու նրա ուշագրությունը կենտրոնացնում իր տարիքին անհամապատասխան հարցերի վրա:

Այսպիսով, ընտանիքի, ինչպես և շրջապատի մեծահասակների կյանքում տեղի ունեցող անթույլատրելի երկույթները երեխաներին ստիպում են հետաքրքրվել և կրկնել նույն երկույթները: Կնշանակի, յուրաքանչյուր ծնողի պարտքն է ընդհանրապես երեխաների ներկայությամբ լինել զուսպ, ակկուրատ և խորհրդատուի գերում:

Որպեսզի ծնողները միշտ և բոլոր դեպքերում կարողան ան-

երեխաների հարցերին ճիշտ պատասխաններ տալ, նախ պետք է իրենք սովորեն սեռական գործարանների կառուցվածքը և նրա հետ կապված մանրամասնությունները, երեխայի սեռական դաստիարակության բնագավառում իր ունեցած ակտիվ դերն ապահովելու համար ծնողը միշտ պետք է հիշի, որ երեխայի հետաքըրությունն առաջին հերթին պատվում է երկու հիմնական հարցի շուրջը. ճշգրիտ բացատրություն ստանալու մարդու ծընվելու փաստի մասին և սեռական հարաբերությունների հետ կապված հարցերի պարզաբանման մասին ընդհանրապես: Հարց է առաջ դալիս, թե երեխայի մը տարիքից պետք է սկսել նրա սեռական դաստիարակությունը: Շատ ծնողներ կարծում են, որ երեխայի սեռական դաստիարակությունը և սեռական խնդիրների մասին նրանց բացատրություններ տալը պետք է սկսել երեխայի արբունքի շրջանից: Այդ կարծիքը ճիշտ չէ և ճիշտ լինել չի կարող, քանի որ առանձին երեխաների մեջ, անդամ նախադպրոցական տարիներում, առաջանում են բազմաթիվ հարցեր կապված սեռական հարաբերությունների հետ: Այստեղից հետեւում է, որ երեխաների հենց այդ տարիքից էլ հնարավոր և անհրաժեշտ է շատ բան անել որպեսզի երեխայի միտքը զարգանա առողջ ձանապարհով:

XVII դարի հայտնի մանկալարժ Ժան-Ժակ Ռուսսոն անդրադառնալով երեխաների սեռական դաստիարակության հարցերին ասել է, որ եթե հնարավոր չէ երեխային մինչև 16 տարեկան դառնալը հեռու պահել սեռական հարցերի օղակից, ապա լավ է այդ անել շուտ, մինչեւ երեխայի 10 տարեկան դառնալը: Լավ է այդ անել շուտ և անպայման ծնողների միջոցով քանարվի ուշ, կեղտու աղբյուրների միջոցով:

Երեխան իր շրջապատռում հաճախ տեսնում է, թե ինչպես ծնվում է փոքրիկ կատուն, կովի հորթը և իրենց ընտանիքի նոր անդամը: Այս բնական երեսութները երեխաների մեջ առաջացնում են զանազան հարցեր: Ահա այդ հարցերին էլ երեխան շատ հաճախ դիմում է ծնողներին: Պարզ բան է, որ այս կարգի հարցերին ծնողները պետք է տան ճիշտ պատասխաններ:

Երեխաների հարցերի նկատմամբ ցուցաբերած հոգատարվերմունքը և ճշտախոսությունը ավելի է ամրացնում ծնող-

ների և երեխաների կապվածությունն ու փոխադարձ վստահությունը:

Ահա մի քանի օրինակներ.

Առաջին.—Մամա, հրաեղից եք ինձ բերել, երբ ես շատ փոքր էի:

—Դու աձել ես, ինչպես խնձորը: Դու սկզբից շատ փոքր էիր, հետո կամաց-կամաց մեծացար և դարձար կարմրաթշիկ, ինչպես խնձորիկ:

—Ուրեմն ինձ բերել եք ծառի վրայից:

—Ոչ, իմ մարմնի միջից, այնտեղից հետո գուրս եկար:

—Ի՞նքս գուրս եկա:

—Այո, մենք քեզ սպասում էինք և ծնվելուց հետո քեզ լողացրինք ու պառկեցրինք փափուկ անկողնում մեծ:

Երկրորդ.—Մամա, գու ինչ ես պահում քո ֆարտուկի տակ:

—Իմ փորի մեջ գտնվում է քո փոքրիկ եղբայրը. նա, մինչեւ մեծանալը, պետք է այնտեղ մնա, իսկ երբ մեծացալ և ուժեղ դարձավ, կակսի խաղալ քեզ հետ:

—Ուրեմն ես էլ եմ եղել քո փորում:

—Իհարկե, բալիկս:

—Ուրեմն զրա համար է, որ դու ինձ այդքան սիրում ես: Այս ասելով երեխան ավելի ամուր է զրկում մորը, ավելի է ամրանում նրանց փոխադարձ կապը:

ԻՆՉՊԻՍԻ ԶՐՈՒՅՑՑՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՍԵՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերևում ասացինք, որ սեռական հարաբերությունների վերաբերյալ երեխաների տված հարցերին պետք է պատասխանել ճիշտ և ժամանակին: Անհրաժեշտ է հիշատակել, որ երեխայի տված հարցերի պատասխանը չպետք է ընդգրկի բոլոր մանրամասնությունները, այլ հարցի պատասխանի այն մասը միայն, որ համապատասխանում է երեխայի տարիքին և կարևոր է տվյալ մոմենտում:

Այս նկատի ունենալով—ծնողները շատ հաճախ երեխաների համար պետք է կազմակերպեն փոքրիկ զրույցներ սեռական կյանքի զանազան հարցերի շուրջը: Զրույցների հիմնա-

կան նպատակը պետք է լինի՝ կոմունիստական
քարոյականության պահանջներով լուսաբանել
սեռական կյանքի հարցերը, պահպանել երեխա-
ների առողջությունը, օգնել երեխաներին խուսա-
փելու հնարավոր սխալներից, նրան հեռու պա-
հել օնանիզմից և վաղաժամ սեռական հար-
բերություններից:

Երեխաներին առաջին հերթին անհրաժեշտ է բացատրել
ֆիզիկական և սեռական կյանքի առողջության կարևորության
մասին: Մեր երկրի ստախանովականների, հերոս օդաչուների և
կարմիրբանակայինների օրինակով ցույց տալ թե ինչերի՞ն
ընդունակ ֆիզիկավես ու մասվորապես առողջ մարդիկ, թե կո-
մունիստական հասարակակարգի կառուցման համար որքան ան-
հրաժեշտ է աճող պատահեկությունն ու աշխա-
տունակությունը: Այդ բացատրությունից հետո, կարելի է ցույց
տալ սեռական աննորմալ կյանքի, օնանիզմի և վաղաժամ սեռա-
կան հարաբերությունների վնասակարությունը երեխաների ա-
ռողջության և մտավոր զարգացման վրա:

Հետագա զրույցներում կարելի է աստիճանաբար շոշափել
երեխաներին ամենից շատ հետաքրքրող հարցեր, ինչպես, օրի-
նակ, մարդու ծնվելու փաստը: Այս գեղքում անհրաժեշտ է բա-
ցատրել երեխաներին պտուղների առաջացման մանրամասնու-
թյունների մասին: Զրույցը կարելի է կազմակերպել գարնան
ամիսներին, երբ երեխաների աչքի առաջ ծառերը բողբոջներ են
արձակում, ապա բողբոջներից առաջանում են ծաղիկներ—իսկ
ծաղիկները թափվելուց հետո երեկան են գալիս պտուղներ:

Այս օրինակի օգնությամբ էլ կարելի է երեխային բացատ-
րել մարդու ծնվելու փաստի մասին: Երեխայի մեջ պետք է
ամրացնել, որ տղամարդն ու կինը պետք է մեծ լինեն և սի-
րեն իրավ փոխադարձաբար, ապա նրանց ամուսնալուց հետո
առաջանում է փոքրիկ երեխան: Երեխան սկզբից առաջանում է
մոր մարմնի մեջ, ինչպես պտուղը ծառի վրա, իսկ հետագայում
երեխան մեծանալով դուրս է գալիս լույս աշխարհ: Այս բացատ-
րությունը հասկանալի կլինի երեխաներին և նրանց մեջ վո-
րուէ կեղտուու միտք առաջ չի բերի:

Ահա այսպիսի համեմատություններով, ինչպես և զանազան
համապատասխան նկարների օգնությամբ հնարավոր է և պետք
է բացատրվեն երեխային հետաքրքրող բոլոր հարցերը:

ԵՐԿՍԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փոքր չեն այն ընտանիքների թիվը, որտեղ կան և աղջիկ-
ներ և տղաներ: Այսպիսի ընտանիքներում երկսեր կաստիարա-
կության գործը պետք է օրինակելի ձևով կազմակերպել: Երկսեռ
դաստիարակության հաջող կազմակերպման պայմաններում երե-
խանիրը դառնում են համարձակ, կիրթ, կուլտուրական և ջան-
քի համատեղ գործադրման խոչըր ունակությունների տեր: Այս
դեպքում երեխաների մեջ մեծանում է փոխադարձ հարգանքը,
տղաների մեջ չքանում է աղջիկներին թերագնահատելու հնից
մնացած երեսույթները և ստիպում է թե աղջիկներին և թե տղա-
ներին հետեւլու իրենց արտաքինին:

Հասկանալի է, որ այս բոլորն առանց մտածված դաստիա-
րակչական աշխատանք կատարելու հնարավոր չէ:

Ընտանիքում ոչ մի տարբերություն չպետք է դնել աղջկա և
տղայի միջև: Շատ ծնողներ կարծում են, որ աղջկան և տղային
նույն տիպի խաղալիք չի կարելի տալ: Դա սխալ է, դա նշանակում
է արիստոկանորեն տարբերություն դնել երկսեռ երեխաների մի-
ջև: Օրինակ, աղջիկների համար գնում են տիկնիկներ, փոքրիկ
մահակալներ, ճաշի պարագաներ, փոքրիկ մկրատ և այլն, իսկ
տղաների համար՝ ավառ, ձի, արջ, հրացան և այլ խաղալիքներ: Ծնողները թե տղաների և թե աղջիկների համար նույնանման
խաղալիքներ պետք է գնեն:

Այսուհետեւ, երեխաներին անպայման պետք է կանչել ա-
նուններով: Շատ ծնողներ երեխաների անունները տալու փո-
խարեն ասում են՝ «աղջիկ», արի տուն, աղջի, դաս սովորի, աղջի,
ջուր բեր» և այլն, իսկ մյուս կողմից «այ տղա, խելոք եղիր, գնա
փայտ բեր» և այլն: Այս էլ արևեստականորեն տարբերություն-
ներ է մատցնում երեխաների մեջ: Ավելին, առանձին գեղքերում
—ծնողները երեխաներին աշխատանքները հանձնարարելիս էլի
հաշվի են առնում սեռի տարբերությունը: Որոշ աշխատանքներ
(կտրել, կարել, գործել) համարում են աղջկա գործ, իսկ գույլով

Հուր բերելը, խանութ գնալը, փայտ կոտորելը՝ տղայի գործ: Այս էլ սխալ է: Ծնողները պարտավոր են աշխատանքային դաստիարակությունը կազմակեղել, առանց սեռերի տարբերություններ դնելու:

Պետք է այնպես անել, որ թե դպրոցում և թե ընտանիքում երեխայի ընկերները լինեն և աղջիկներ, և տղաներ, աղջկան տղայի մտերմական, համատեղ աշխատանքն ու խաղը պետք է խրախուսվի:

Հարկ ենք համարում հիշատակել, որ առանձին ծնողներ ավելի շատ են սիրում տղաներին քան աղջիկներին: Այսպիսի ընտանիքներում աղջիկ երեխան իրեն մի տեսակ մենակ և խորթ է զգում, իրեն հեռու է պահում տղաներից և հատկապես իր եղբորից:

Վերևում բերված երևոյթները պետք է վերացվեն ինչպես դպրոցում, նույնպես և ընտանիքում, որպեսզի ապահովվի երեխաների երկսեռ ճիշտ գաստիարակության դորձը:

ՆԵՐՎԱՅԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներվային երեխաների մասին շատ հաճախ լսում ենք ու խոռում, Սակայն անհրաժեշտ է խմանալ, թե որ երեխային կարելի է ներվային համարել:

Ներվային երախան հետությամբ ջղայնանում է, դատարկ քանի համար լաց է լինում, վատ է քնում, գիշերները շուտ-շուտ արթնանում է, հաճախ վեր է թռչում լացով կամ բարձր ձիչեր արձակելով: Ներվային երեխան, նույնիսկ փոքր առիթի դեպքում ջղայնանում է, խանգարում խաղը և հեռանում: Ներվային երեխան միշտ անհանգիստ վիճակ է ապրում, երկու ըոտի նույն տեղում հանդիսաւ նստել չի կարողանում: Ներվային երեխաները համբերությամբ մի գործ մինչև վերջ հասցնել չեն կարողանում: Նրանք հաճախ սկսում են այս կամ այն աշխատանքը և դեռ չվերջացրած թողնում են այն և սկսում նոր աշխատանքը, վերջինից էլ շուտով հրաժարվելու նպատակով:

Ներվային երեխաները շատ հաճախ լինում են ընդունակ, խելոք և արագ ըմբռնող բայց նրանց հիմնական թերությունը կայանում է նըանում, որ իրենց էներգիան ծախսում են շատ արտգ և ան-

նպատակ, որի հետեւանքով հոգնում են և ծուլաւ նում որ կ է աշխատավոր կատարել: Այսպիսով ներվային երեխաները իրենց դեկավարել չեն կարողանում և իրենց էներգիան ցըռում են աննպատակ շաբաթումների մեջ:

Ներվային երեխաներն ունեն էլի շատ ուրիշ գծեր, սակայն այն, ինչ ասացինք, դա բնորոշն է և հիմնականը բոլոր ներվային երեխաների համար:

Այժմ անցնենք այն պատճառների քննությունը, որոնք երեխային դարձնում են ներվային: Շատերը կարծում են, որ ներվային երեխաները հենց այդպես էլ ծնվում են: Բոլորովին էլ ոչ: Երեխայի ներվայնության պատճառները պետք է փշտորել ոչ թե երեխայի ներքին բովանդակության մեջ, այլ շրջապատող պայմանների մեջ: Հայտնի է, որ նորմալ երեխան մորից ներվային չի ծնվում, այլ նա ներվային է դառնում իրեն շրջապատող պայմանների մեջ:

Երեխաների ներվային սիստեմի վրա, ամենից շատ ազդում են ծնողների փոխհարաբերությունները: Ընտանեկան անհամաձայնությունները, կոպիտ խոսակցությունը, հայոցանքը, որոնք երբեմն արտահայտվում են ուղղակի կովի միջոցով—անկասկած բացասական ազգեցություն են թողնում երեխաների վրա:

Առանձնապես ծանր է ազգում երեխաների վրա երբ հայրը բաժանվում է մորից կամ մայրը հորից և երեխաներին թողնում աննորմալ պայմանների մեջ: Ընտանեկան այսպիսի պայմանները ժամանակի ընթացքում ազգում են երեխաների ներվային համակարգության վրա և նրանց դարձնում ներվային: Երեխաները շատ հաճախ ընդորինակում են ծնողների և ընդհանրապես մեծահասակների բնավորության գծերը և կըրկնում նույնը: Երբ երեխաներին շրջապատող մեծահասակներն իրենց պահում են անհանդիսա, փոքր առիթների գեպքում պատրաստ են գուգուալ, հայոցել, սպառնալ ու հարձակվել ուրիշների վրա, ապա պարզ է, այդ բոլորին ականատես երեխան, որը բոլորովին նորմալ է ծնվել կդառնա ներվային և անհանգիստ:

Կնշանակի՝ երեխային շրջապատող պայմանները, հասակավարելու ուրիշների վրա, ապա պարզ է, այդ բոլորին ականատես երեխան, որը

ինչպես և ոչ ձիջա գաստիարակությունը երեխա-
յին ներվային դարձնող գլխավոր պատճառն է:

Առանձին ծնողներ երեխաների դաստիարակության աս-
պարեղում թույլ են տալիս լուրջ սխալներ: Հիշենք այդ օրի-
նակներից մի քանիսը միայն: Կան ծնողներ, որոնք երեխաների
նկատմամբ կիրառում են արտակարգ խստություն և պահանջ-
կություն: Այդպիսի ընտանիքում երեխան անընդհատ լուրմ է.
«այդ չի կարելի», «դրան ձեռք տալ չի կարելի», «այստեղ չի
կարելի մտնել», «ամեն բանի մեջ չեն ընկնի», «ձայնդ
կարի, այդ քու խելքի բանը չի» և այլն: Այսուհետև երեխային
լուր դարձնելու համար, նրան վախեցնում են սատանաներով և
զանազան գիշատիչ կենդանիների անուններ տալով, իսկ երբ այս
գեղքում էլ երեխան չի լուրմ, ապա ծեծը պատրաստ է: Երե-
խայի նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրող ծնողը—ամենից
առաջ ցույց է տալիս իր անկարողությունն ու անընդունակ լի-
նելը դաստիարակության ավելի լավագույն միջոցներ փնտրելու
տեսակետից: Ծեծը և ընդհանրապես ֆիզիկական պատիժը թու-
լացնում է երեխային, նրան նսեմացնում է իր և ուրիշների ա-
ռաջ, և կորցնում է իր նկատմամբ ունեցած հավատն ու հար-
գանքը: Բացի այդ, երեխան իրեն շրջապատող բոլոր մեծահա-
սակներին դիտում է որպես իր թշնամիների, որոնցից կարելի
է աղատվել խարելու և խորամանկության ճանապարհով: Ծեծը և
ժանկավարժության կողմից վաղուց դատապարտված պատժի մյուս
ձեռքը երեխայի ուղեղը պահում են լարված և անհանդիստ վի-
ճակում:

Հոյություն ունի դաստիարակության մի ուրիշ ձև էլ, որն
ավելի պակաս վտանգավոր չէ, քան առաջինը: Երեխային շրջա-
պատող մեծահասակները, հատկապես մայրը, ամեն ըովե մտա-
ծում են երեխայի մասին, օգնում են նրան, երբ անգամ օգնու-
թյան կարիք չկա և ձեռք են բերում այն ամենը, ինչ պահան-
ջում է երեխան: Երբ երեխան միակն է ընտանիքում, ծնողները
չեն թողնում, որ երեխան հեռանա իրենց աշխի առաջից, դո-
ղում են նրա յուրաքանչյուր շարժման գեղքում, հազցնում և
հանում են նրա շորերը, թեև նա կարող է այդ անել, գրքերը
դասավորում են պայուսակի մեջ, ուղեկցում են մինչև դպրոց և
դպրոցից տուն: Ինչ արդյունք է ստացվում դաստիարակության

այսպիսի ձեից: Ծնողների, բարեկամների և ընդհանրապես մե-
ծահասակների անտեղի «հոգատարության» հետևանքով երեխան
դառնում է վերին սատիճանի զգայուն և թուլակազմ: Նա զրկվում
է, կամ ավելի շուտ հառարյա զրկվում է ինքնուրույն աշխա-
տանք կատարելու ընդունակությունից և կյանքում նրան հան-
գիպած առաջին փոքրիկ դժվարության դեպքում նա հուսահատ-
վում է և ձեռքերը ծալում, երեկայում իրեն անելանելի դրու-
թյան մեջ:

Եթե երեխայի նկատմամբ կիրառվող արտակարգ խստու-
թյունները նրա ներվային սիստեմը պահում էին հիվանդու-
թարվածության մեջ, ապա երեխայի նկատմամբ միանդամայն
անտեղի, անընդունելի փափկությունը նրա ներվային սիստեմը
զրկում է առողջ գրգռականությունից, որը խիստ անհրաժեշտ է
նրա նորմալ աճման և աշխատունակության զարգացման համար: Այս գեղքում էլ երեխայի մեջ զարգացող թուլությունը, ինք-
նագործունեության պակասությունը նրան դարձնում են ներվա-
յին: ↗

Դաստիարակության երրորդ ձևը—առաջին և երկրորդ ձևե-
րի համատեղ դրսեորումն է: Քիչ չեն այն ընտանիքների թիվը,
որտեղ երեխաների նկատմամբ կիրառում են աղղման արտա-
կարգ խստության միջոցներ և յուրա կողմից էլ հանդես են բե-
րում մեղմություն և փափկություն: Շատ դեղքում էլ հայրը
բարկանում է երեխայի վրա, անգամ մի լավ էլ հասցնում է, իսկ
մայրը—նույն վայրկյանին մի քանի կոսիտ խոսք էլ շպրտելով
ամուսնուն, զրկում է երեխային և համբուրում: Մի ուրիշ գեղ-
քում էլ մայրն է բարկանում երեխայի վրա, իսկ հայրը նույն
մոմենտին—երեխային իր պաշտպանության տակ է առնում: Երեխան
ընտանեկան այլօրինակ հարաբերությունների մեջ,
չգիտի թե ինչ է սպասում իրեն՝ խստություն թե մեղմություն:
Այնպես, ինչպես աչքերը փչանում են շատ վառ լույսից հան-
կարծ մթին անցնելով, այնպես էլ երեխայի ներվային համա-
կարգությունը կորցնում է իր նորմալ աշխատանքը ծնողների
տրամադրությունների և երեխայի նկատմամբ ունեցած վերա-
բերմունքի մեջ առաջացած հաճախակի փոփոխությունների հե-
տևանքով:

Վերջապես—երեխային ներվային են դարձնում նաև

նրան շրջապատող մյուս երեխաները ծնողը շատ հաճախ չի հետևում և չի էլ հետաքրքրվում, թե ինչպիսի երեխաների հետ է խաղում իր երեխան: Փաստերը ցույց են տվել, որ անհամապատասխան խաղը և խաղին մասնակցող երեխաներն իրենց կոպտություններով, վայրենի ճիշերով, փոխադարձ ծեծի գեպքերով ու փողոցային հայրոյանքներով պակաս ազգեցություն չեն թողնում երեխայի ներվային սիստեմի վրա:

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել, որ երեխային ներվային է դարձնում նաև բնակարանի թափթփվածությունը, վատ սնունդը, երեխայի հագուստի ու անկողնու անմաքրությունը:

Այստեղ մենք ըստ հնարավորին ցույց տվեցինք այն աղբյուրները, որոնք երեխային դարձնում են ներվային: Սակայն պակաս կարենը չինք համարում թվել այն միջոցները նաև, որոնց օգնությամբ հնարավոր կլինի մեզմացնել երեխայի թույլ և հիվանդու ներվերը:

1. Ամենից առաջ ներվային երեխայի ծնողները պարտավոր են պահանջել նրա հանգիստն ու քունը, որը խոշոր միջոց է ներվայնության դեմ պայքարելու համար: Կարենը ենք համարում այստեղ բերել ներվային երեխայի համար քնելու անհրաժեշտ ժամանակի առողջությունը: Կրծքի երեխան պետք է քնի օրական 16—17 ժամ, մինչև 3 տարեկան երեխային անհրաժեշտ է քնել 14 ժամ, նախադպրոցական հասակի երեխաներին (3—7 տարեկան)՝ 13 ժամ, դպրոցական տարիքի երեխաներին (8—12 տարեկան)՝ 11—12 ժամ և այլն, ներվային երեխաներին պետք է հնարավորություն տալ 1 ու կես ժամից մինչև 2 ժամ քնել նաև ցերեկը: Քունը ներվային երեխաներին հանգստացնում է և ազատում է անարդյունք շարժումներ կատարելուց:

2. Ներվային երեխային պետք է լավ սնել, թույլ չպիտի տալ նրան ծխել և ոգելից խմիչքներ գործածել Բացի այդ, նրան պետք է հանձնել ֆիզիկական կամ մտավոր այնպիսի աշխատանք, որ համապատասխանի նրա ուժերին: Երեխային հանձնարարված աշխատանքը տևական բնույթ պետք է կրի և պետք է ձգտել, որ երեխան 5—10 րոպե հանգստանա—աշխատանքի յուրաքանչյուր ժամից հետո:

3. Ծնողները պետք է հետևեն, որ երեխան հաճախ լինի մաքուր օդում. վաղ առավոտյան անհրաժեշտ է օդափոխել սեն-

յակը, ուր քնած է երեխան և պայմաններ ստեղծել, որ նա սիստեմատիկաբար զբաղվի ֆիզիկուլտուրայով: Ֆիզիկական թեթև շարժումները, ֆիզկուլտ խաղերը (չմուշկներ, սահնակ, դահուկ և այլն) ամրացնում են ինչպես երեխայի ընդհանուր առողջությունը, նույնպես և նրա ներվերը:

4. Երեխային շրջապատող բոլոր միծահառակների դաստիարակչական աշխատանքները պետք է ուղղված լինեն այն բանին, որ ներվային երեխայի մեջ առաջացնեն վստահություն դեպի իր սինիական ուժերը: Երեխայի մեջ պետք է ամրացնել համարձակության, արիության և հաղթանակի նկատմամբ հավատի հատկանիշները, ոս երեխայի ներվերի բուժման ամենալավ, ամենավստահելի միջոցն է:

Այսուհետեւ, պետք է խսպառ վերացնել երեխաներին սատանաներով և այլ միջոցներով վախեցնելու, դժբախտաբար դեռ գոյություն ունեցող գուհերիկ միջոցները, որոնք երեխային պահում են ան ու սարսափի մեջ:

5. Երեխայի դաստիարակության ասպարեզից պետք է հանել ամեն ինչ պատրաստի ձեռվ նրան մատուցելու երառութները: Երեխային չպետք է օգնել այն բանում, որ կարող է ինքն անձամբ անել (գրքերը հավաքել պայուսակում, հացցնել և հանել շորերը, սովորեցնել դասերը, ուղեկցել դպրոց և այլն). Ընդհակառակը, երեխային պետք է ընտելացնել ինքնուրույն աշխատանքի, այլապես, մի փոքր դժվարության հանդիպելիս, նա թույլանում և կազմակուծում է աշխատանքը: Իսկ երբ երեխան ինքնուրույն կաշխատի և կտեսնի իր սեփական աշխատանքի արդյունքը, հենց այդ էլնրան ներվային հանգստություն կպատճառի:

ԿԱՊՐԻԶ ԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Երեխայի կապրիզը կարող է և արտահայտվում է բազմաթիվ ձևերով: Կապրիզը ու երեխայի կամ ավելի տարիքավոր մարդու այն գործողությունն է, որ անմիտ է և զուրկ և խելացի հիմքից: Այսպես, օրինակ՝ երեխան, առանց որևէ լուրջ պատճառի հըստարվում է գրատախտակի մոտ գնալ և պատասխանել ուսուցչի աված հարցերին: Մի ուրիշ դեպքում, երեխան պառկում է

գետնի վրա և էլ որևէ կերպ նրան վեր հանել հնարավոր չի լինում: Ավելի տարածված են այն դեպքերը, երբ երեխաներն առանց որևէ պատճառի հրաժարվում են որևէ բան ուտել կամ ծնողների հետ զբոսանքի դուրս գալ: Քննենք առաջին դեպքը: Եթե երեխան օրվա դասերը պատրաստած չլիներ և այդ պատճառով հրաժարվեր ուսուցչի առաջադրած հարցերին պատասխանել, ապա դա հասկանալի է և մենք այդ արարքը կապրիզ չենք կարող համարել: Կապրիզ չենք կարող համարել նաև ուտելուց հրաժարվող երեխայի գործողությունը, եթե այդ մոմենտին նա իրեն տկար դգար:

Հարկավոր է ավելացնել՝ որ ավելի շուտ համառ և կապրիզում են լինում հիվանդները: Պարզ է, որ առողջ, ամրակազմ ու իր ուժերի վրա վստահ մարդիկ չեն կարող հաշտվել կապրիզի և նրա բազմաթիվ ձևերի հետ: Այսպիսով, կապրիզն իր արտահայտության բազմաթիվ եղանակներով երեխայի թուլության արդյունք է և հենց երեխայի թուլությունն է կապրիզի գլխավոր աղբյուրը:

Յուրաքանչյուր երեխայի մոտ կապրիզը դրսերպում է տարբեր եղանակներով ու ձևերով, սակայն բոլոր դեպքերում կապրիզի պատճառը նույնն է: Հարց է առաջանում, թե ինչո՞ւ երեխայի թուլությունը դառնում է կապրիզ ծնող գլխավոր պատճառը, և ինչի՞ է ձգտում երեխան իր կապրիզով:

Կառկածից վեր է, որ երեխան չի հասկանում կապրիզի միտքը և իրեն հաշիվ էլ չի տալիս այդ գործողության համար: Բոլոր ծնողներին հայտնի է, որ հիվանդ մարդը, որ պառկած է անկողնում, նա միշտ էլ կապրիզոտ է լինում: Հիվանդը տեսնում է աղմկոտ և շարժուն կյանքը, առողջ մարդկանց ստեղծագործական աշխատանքը, մինչդեռ ինքը պառկած է անկողնում և չի կարող լինել նրանց շարքերում: Նա ինքն էլ է ցանկանում ապրել այդ շարժուն—ստեղծագործական կյանքով և կյանքում պահովել իր ակտիվ գերը, նույնիսկ անկողնում պառկած: Հենց այդ պատճառով էլ, ամեն բողք նա պահանջում է մեկ այս, մեկ այն, և ինքն էլ չգիտե իր ցանկացածը: Իր այդ պահանջներով հիվանդը ցանկանում է հավատացնել իրեն և բոլորին, որ ինքը դեռ ուժ ունի և կարող է կարգադրել բոլորին:

Այսպիս է գործը նաև կապրիզոտ երեխաների մոտ: Երե-

շաներն իրենց այս կամ այն թուլությունը ցանկանում են թափնել կապրիզի քողի տակ, լացի, և դատարկ ոչնչով չպատճառաբանվող արարքների միջոցով: Որևէ թուլություն ունեցող երեխան ցանկանում է խաղար վազվել առողջ երեխաների պես, սակայն չի կարողանում և այդ պատճառով իր էներգիան ծախսում է կապրիզի և անբովանդակ գործողությունների մեջ: Երեխան ցանկանում է հավատացնել իրեն և շրջապատի մարդկանց, որ ինքն ուժ ունի և կարող է հարկադրել ծնողներին ու բարեկամներին իր այս կամ այն անտեղի պահանջը կատարելու: Թույլ երեխաներին հաճելի չէ մտածել, որ ինքը թույլ է, քան իր ընկերները: Նա չի ցանկանում, որ իր մասին այդպես մտածեն նաև շրջապատի մարդիկ և այդ պատճառով նա իր պահանջներով ու կապրիզով բոլորի ուշագրությունը կենարոնացնում է իր վրա: Ճիշտ է, և ներվային, և թույլ, և առողջ երեխաները ցանկանում են կյանքում իրենց ակտիվ գերն ապահովել, գրավել իրենց շրջապատի ինչպես մեծահասակների, նույնպես և երեխաների ուշագրությունը: Սակայն այն դեպքում, երբ առողջ երեխան այդ բոլորը կատարում է իր սեփական ուժերի միջոցով, ապա թույլ, վատ գաստիարակված երեխան ձգտում է այդ բոլորին հասնել կապրիզի ճանապարհով:

Ասացինք, որ երեխայի կապրիզի հիմնական աղբյուրը հանդիսանում է թուլությունը և սեփական անվճականությունը: Բացի այդ, երեխային կապրիզոտ զարձնելու գործում պակաս դեր չի խաղում նաև ներվային հիվանդությունը, որը շատ հաճի դրսերպում է հենց կապրիզի միջոցով:

Բացատրելով կապրիզի հիմնական պատճառները, այժմ հնարավոր է, ցույց տալ այն միջոցները, որով հնարավոր է պայշտարել կապրիզի գեր:

1. Նախ հարկավոր է կարգավորել կապրիզոտ երեխայի նկատմամբ ծնողների և շրջապատի հասակավորների փոխգործողությունները: Ծնողներն ամեն կերպ երեխայի մեջ պետք է ներշնչեն հավատ գեպի իր սեփական ուժերը, թույլ չպիտի տալ, որ նա այս կամ այն գործը ծնողներին կատարել տալ կապրիզի ճանապարհով:

2. Կապրիզոտ երեխայի միջավայրը երկուաերեք տարին մեկ պետք է փոփոխել. Ճիշտ է, դա դժվար կլինի ծնողների համար, սակայն դա անհրաժեշտ է և պետք է կատարել: Առհասարակ բո-

լոր ղեպքերում պետք է ուշադիր լինել ղեղի երեխայի պահանջները, բայց այդ պետք է անել նրա համար, որ աչքաթող չանենք երեխայի միանգամայն արդարացի և անհրաժեշտ պահանջները և անենք այնպես, որ երեխան չզգա իր ուշադրության կենտրոնում լինելը: Ծնողները և ընդհանրապես մեծահասակները կապուի երեխայի նկատմամբ պետք է լինեն վճռական, հանգիստ և զգայուն: Երեխայի խաղալիքները հաճախ պետք է լրացնել նորերով, ձեռք բերել հետաքրքրական նկարներ և մանկական նկարագարդ գրքեր, որպեսզի երեխան կենտրոնանան և դրադիլի նրանցով:

3. Մեծ նշանակություն ունի նաև կապրիզոտ երեխայի անհրաժեշտ հանգստի ճիշտ կաղմակերպումը: Ծնողները պետք է զգույշ լինեն և բոլորովին թույլ չպիտի տան կապրիզոտ երեխայի ներկայությամբ նրա մասին ավելորդ գովեստներ շուայլել անտեղի փայփայել կամ ինքնասիրությանը դիպչել ընդհակառակը, պետք է լինել անտարբեր և զգույշ իրենց արտահայտությունների մեջ երեխայի նկատմամբ: Հարկավոր է ճիշել, որ կապրիզոտ երեխան անընդհատ ձգտում է իր վրա կենտրոնացնել ծնողների ուշադրությունը, որպեսզի ստիպի նրանց իրեն մասին խոսելու, իսկ երբ ծնողներն ընդպառաջում են երեխայի ցանկությանը, ապա այդ սիստեմ է դառնում և աստիճանաբար խորանում ու ավելի լայն չափերի հասնում: Միանգամայն ճիշտ կինի, որ ծնողները կամ շրջապատի հասակավորները երեխայի կողմից երևան բերվող կապրիզի նկատմամբ լինեն անտարբեր և ցույց տան, որ իրենք չեն նկատելու բոլորովին կարևորություն չեն տալիս այն արարքին, որ կատարել է կամ կատարում է երեխան: Այսպիսի սառը վերաբերմունքը երեխայի կապրիզի նկատմամբ և ուշադիր ու հոգատար վերաբերմունքը նրա խելացի գործողությունների ղեպքում, լավագույն միջոց է երեխայի կապրիզի դեմ պայքարելու համար:

4. Եվ վերջապես, ծնողները պետք է ճիշեն և պահանջեն, որ երեխան անպայման կատարի իրեն հանձնարարված աշխատանքը, Դրա համար երեխային պետք է հանձնարարել իր ուժեղին համապատասխան աշխատանք—հաշվի առնելով նրա հանգըստի համար անհրաժեշտ ժամանակի պահպանումը: Պահանջնեղությունը երեխայի մեջ կառաջացնի հավատ իր ուժեղի և ունակությունների նկատմամբ, որի հետևանքով նա աստիճանաբար կհրաժարվի իր պահանջները կապրիզի միջոցով կատարել տալու մտքից:

ԴՊԲՑԻ ԵՎ ԸՆԾԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Սովետական ընտանիքը հանդիսանում է սովետական գշատոցի լավագույն օգնականը՝ երեխաների կոմունիստական դաստիարակության գործում: Մեր երկրում ծնողները հանդիսանում են հասարակական դաստիարակողներ և հենց դրա մեջ է կայանում ծնողների անձնական և քաղաքացիական պարտքը: Հայր լինել Սովետական երկրում դա մեծ բախտավորություն է, դա պատվավոր կոչում է: Դա ընտանիքի նահապետը չէ, խոսքի նախկին իմաստով, նա սովետական քաղաքացի է, նոր կենցաղի կառուցողը, նոր սերնդի դաստիարակողը:

Ծնողները պարտավոր են երեխային դարձնել սովետական լիարժեք քաղաքացի: Դա նրանց պարտքն է և իրավամբ հանդիսանում է նրանց պարձանքը: Մեր ժողովրդի՝ բանվոր դասակարգի, գյուղացիության և ինտելիգենցիայի շարքերում տասնյակ միլիոնների է հասնում այն ընտանիքների թիվը, որոնք, երեխաների խնամքի ու դաստիարակության ասպարեզում լավագույն օրինակներ են հանդիսանում: Բաղմաթիվ են այն ընտանիքների թիվը, որոնք մեր սոցիալիստական հայրենիքին տվել են հազարերության մեջունակերպ կապրիզի աշխատանքի հարվածայինները: Շավուրը հերոսներ և միլիոնավոր աշխատանքի հարվածայինները:

Այս տեսակետից շատ ուսանելի է մեր մեծ ուսուցիչների՝ Մարքսի, Լենինի վերաբերմունքը զեպի երեխաները: Մարքսը ուկուցիոնների ուսուցիչն ու դաստիարակողը, միաժամանակ եղել է օրինակելի հայր: Անա թե ինչ է գրում իր հիշողություններում Մարքսի աղջիկը՝ կլեոնորա Մարքս կվելինդը: «Մարքսից լավ ընկեր—երբեք երեխաները չեն ունենում: Հեքիաթներ պատ-

մելու մեջ նա միակն էր: Մարքսը սովորություն ուներ երեխանեւ ըի համար նաև բարձր կարդար: Նա իմ քույրերին, ինչպես և ինձ՝ կարդացել էր Հոմերոսն ամբողջովին, «Նիբելունգների երգը», «Դոն Քիշուալը», «Հազար ու մի գիշեր» և այլն:

Կարդալիս և զրուցելիս Մարքսը բացատրում էր, թե ինչպես պետք է գրքում գտնել զեղեցիկն ու լավը: Նա սովորեցնում էր մտածել ու հասկանալ:

Աշխատավորության հանճար ընկեր Լենինը, որ աշխատում էր թե ցերեկը և թե գիշերը, էլի ժամանակ էր գտնում երեխաների դաստիարակության և ուրախ ժամանցի հարցերով զբաղվելու համար:

Բերենք մի օրինակ. «Մի անդամ հայրիկս սանատորիա գնաց Վ. Իլիչի հետ տեսակցելու: Ինձ ու եղբորս էլ հետը տարավ: Երբ տեղ հասանք, ես ու եղբայրս սկսեցինք այգում խաղալ իսկ հայրիկս խոսում էր Իլիչի հետ:

Հետո մեր խաղին միացավ Վ. Իլիչը: Մենք խփում էինք իրար ու փախչում: Ետևից վաղելիս ես պինդ բռնեցի Իլիչի թերը: Նա աղատեց թեն ու սկսեց ծիծաղել ինձ վրա ասելով.

—Չբռնեցիր, չբռնեցիր:

Ես հարցըրի.

—Ինչպես թե, չէ՞ որ բռնել եմ:

Նա պատասխանեց.

—Դու ոչ թե ինձ բռնեցիր, այլ իմ բաճկոնի թերը ու փախավ: Երեխաների դաստիարակության, դեպի նրանց ուշադիր վերաբերմունքի հիանալի օրինակներ են հանդիսանում Վ. Ի. Լենինի ծնողները: Լենինի հայրը՝ Իլյա Նիկոլաևն ինքն ուսուցիչ էր և ժողովրդական ուսուցչի լավագույն բարեկամը: Նա ցարիզմի տիրապետության դժնդակ տարիներին, հսկայական էներգիա է գործադրել որպեսզի ավելի լավ կազմակերպվի ժողովրդական կրթության գործը: Նա միաժամանակ լավ հայր էր և իր երեխաների հիանալի դաստիարակողը: Իլյա Նիկոլաևն իր ընտանիքի հետ ապրում էր հաշտ և սերտ կապված էր իր կնոջ ու երեխաների հետ: Նրա երեխաներն ընտանեկան աղմուկի, անհամաձայնության դեպքերի ականատես չեն եղել: Իլյա Նիկոլաևն հատաքրքիվում էր իր երեխաների ոչ միայն զպրոցական-ուսումնական աշխատանքներով, այլև տնային ընթերցանության կազ-

մակերպման գործով: Նա իր երեխաներին ծանոթացրել էր ոռուսական բոլոր հայտնի գրողներին և նրանց գրական աշխատություններին: Նա միշտ հետևում էր, որ երեխաները թեթև վերաբերմունք չունենան հանձնարարած աշխատանքը ժամանակին կատարելու ասպարեզում: Այդ պատճառով հաճախ ստուգում էր, թե ինչպես են երեխաները կատարում դպրոցի կողմից տրված հանձնարարությունները: Վ. Ի. Լենինի ծնողները ցանկանում էին ամեն կերպ, երեխաներին ուրախ պահել, այդ նպատակով երեխաներին հաճախ զուրս էին բերույ զրուանքի, կազմակերպում էին ընթերցանության երեկոներ, զանազան խաղեր, որոնց ակտիվ մասնակցում էին նաև իրենք՝ ծնողները:

Տեղին է այստեղ բերել ընկ. Վիրիպաևայի հոդված-նամակից մի հատված, որը ճիշտ է դնում ծնողի պարտականությունները երեխաների դաստիարակման բնագավառում: «Կարող է թվայի ասում էնա, —որ ես հուզվելու բան չունեմ, թե ես պետք է հանգիստ լինեմ իմ տղայի համար. սակայն գիշերները ես չեմ քնում, մտածում եմ իմ տղայիս և իմ մասին.

Այս, իմ տղան լավն է: Իսկ ես ինչպիսին եմ: Արդյո՞ք լավ մայր եմ ես և ինչպիսին պետք է լինի մեր սովետական մայրը, մտածում եմ ես: Ինձ թվում է, որ իսկական մայր, իսկական դաստիարակչունի լինելը շատ է դժվար: Դժբախտաբար, մեզանից ոչ շատերն են նման Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու տատին, չէ՞ որ հենց նա է եղել Գորկու առաջին դաստիարակչունին, նա է նրան սովորեցրել չարն ու բարին: Շատ մայրերի դժբախտությունն այն է, որ նրանք շատ լավ հիշում են, որ մայրը պարտավոր է լողացնել, շոյել և կերակրել երեխաներին, նրանք չեն մոռանում գուլզաների ծակերը լցնել, անդրավարտիկը կարկատել, բայց այն մասին, որ մայրը պարտավոր է դաստիարակել երեխային, մեր հայրենիքի ապագա քաղաքացուն՝ շատ մայրեր չեն մտածում:

Իմ ընկերուհիներից մի քանիսը հենց այսպես էլ ասում են... նրանց դաստիարակում են դպրոցը և պիոներական ջոկատը: Իսկ ես կարծում եմ, որ այդ ճիշտ չէ. երեխաներին դաստիարակում, ամեցնում են բոլորը միատեղ՝ ծնողները, դպրոցը, ջոկատը, կոմերիտմիությունը: Իսկ բնչ է նշանակում մեր երկրում դաստիարակել երեխային: Ինձ թվում է, որ ամեն մի մայր ունի իր իդ-

ձը. մեկը ցանկանում է իր որդին օղաջու դառնա, մյուսը՝ երաւժշտ, երրորդը՝ բժիշկ և ամեն մեկը երազում է, որ իր որդին Սովորական Միության հերոս դառնա»:

Ինչպես տեսնում եք, երեխայի ընտանելան դաստիարակությունը բավականաչափ պարզ է և կոնկրետ՝ սովետական ընտանիքը—երեխաներին պետք է դաստիարակի Մարքսի, Լենինի հոր՝ Իլյա Նիկոլաևի օրինակներով: Շատ ծնողներ գանգատվում են, որ իրենք ժամանակ չունեն երեխաների դաստիարակության հարցերով զբաղվելու Դա ճիշտ չէ: Եթե մարքսիզմի կլասիկները իրենց ուսուցիոն-գիտական հսկայական աշխատանքի հետ ժամանակ էին գտնում նաև երեխաների դաստիարակության կարևոր հարցերով զբաղվել ապա սովետական յուրաքանչյուր ընտանիք, ճիշտ դասավորելով իր արտադրական-հասարակական աշխատանքները, միշտ էլ կարող է ժամանակ գտնել զբաղվելու երեխաների դաստիարակության հարցերով:

ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Դպրոցի և ընտանիքի փոխադարձ օգնությունը վճռական նշանակություն ունի ուսուցման և դաստիարակության գործը լավագույն կերպով կազմակերպելու համար: Վերջին տարիներում զգալիորեն լավացել է դպրոցի և ընտանիքի կապն ու փոխադարձ օգնությունը: Մեր ծնողական հասարակությունը ոգեսորվում է դպրոցի հաջողություններով և սրտով ցավում է նրա թերությունների համար: Եվ իրոք, այն դպրոցում, որտեղ ծնողներն ակտիվ կերպով աշխատում են և օգնում մանկավարժական կոլեկտիվին, այնտեղ անհամեմատ ավելի բարձր է ուսումնադաստիարակաշական աշխատանքների որակը: Ծնողները դպրոցին օգնում են կան աշխատանքների որակը: Ծնողները դպրոցին օգնում են նշանակություն ամրացնելու համար, կազմակերպում են արտադասարանական պարագաների հետ մնացող աշակերտների հետ և ղեկավարում են դըպմունքներ հետ մնացող աշակերտների հետ և ղեկավարում են դըպի արտադասարանական խմբակների աշխատանքը: Ծնողները ըստի արտադասարանական նաև դպրոցական և տնային ուժիմի անթերի կահետեւս են նաև դպրոցական և տնային ուժիմի անթերի կատարմանը, ինչպես և ապահովում են երեխաների ճիշտ ժամանակին ու մաքուր հագնված հաճախելու գործը, որը մեծ նշանակություն ունի ուսման որակի բարձրացման համար: Ելք ծնողները հետաքրքրվում են այն դպրոցի կյանքով,

որտեղ սովորում են իրենց երեխաները, սիստեմատիկաբար հետաքրքրվում են երեխաների ուսման գնահատականներով, խորհուրդներ են տալիս նրան ավելի լավ սովորելու համար, ավելի կարգապահ լինել դպրոցում և հարգել ուսուցիչներին,—ապա այս բոլորը, անկասկած, լավացնում է ուսման գործը և երեխաներին ավելի է կապում դպրոցի և ուսուցչի հետ: Ծնողները պետք է կապված լինեն դպրոցի հետ, մասնակցեն ծնողական ժողովներին, օգնեն զպրոցին, եթե օգնության կարիք կզգացվի, հետաքրքրվին երեխաների վարքով և ուսման աշխատանքներով: Ծնողը պարագավոր է ամեն օր խմանալ երեխայի առաջադիմության գնահատականները: Եթե ծնողը տեսնում է, որ երեխան սկսում է հետազիմել վատ սովորել, ապա անհրաժեշտ է գնալ զպրոց—իմանալ պատճառը և դաստիարակի օգնությամբ մշակել միջոցառությունը—երեխային առաջավորներին հասցնելու համար:

Դեպի երեխան ունեցած գիտակից, խորածիտ վերաբերմունքի օրինակներ շատ կան: Մեղրու շըջանի, Մեղրու դպրոցի աշակերտ Ավոյի հայրը կոլտնտեսության բրիգադիրն է, իսկ մայրը՝ տնտեսուհի: Զնայած իր բազմաթիվ աշխատանքներին հայրը հետաքրքրվում է դպրոցի, դասարանի կյանքով: Երեխան սիրով ծնողներին հաղորդակից է անում իր հոգեբրին և ուրախություններին, տանն ամեն ինչով օգնում է նրանց և լավ ջանասիրությամբ սովորում է:

Կարև լիբէնեխտը 1917 թվին նամակ է գրում փոքրիկ աղջկան, որի մեջ կարելի է գտնել շատ բան, որ ծնողներին կօգնի կանոնավոր հարաբերություններ ստեղծել դպրոցի և երեխաների միջև:

«ԻՄ ՓՈԲՐԻԿ ՄԿԱՆԻԿ»

«Ես ստացա փետրվարի 7-ին գրած քո հիանալի նամակը... Զնայած, որ նոր ուսումնաբանի ուսուցչուները խիստ են, բայց համոզված եղիր, որ քեզ համար նրանք շուտով սովորական կդառնան, միայն թե եղիր աշխատանքը և լող... Ահա թե ինչ, եթե դուք գալու եք ինձ մոտ մոտավորապես երեք շաբաթ հետո, չմոռանաք հետներդ վերցնել գնահատականները և ցույց տալ... Ուրիշն դու դիտել ես «Վիլհեմ Տելլը», լավ. բայց երբ թարո-

նում ուզում ես տեսնել, անհրաժեշտ է նախ և առաջ կարդալ
այդ գործը:

Այս լավագույն օրինակների կողքին կան և վատերը: Առան-
ձին դեպքերում ծնողները երեխաների ներկայությամբ թույլ են
տալիս ուսուցչի և դպրոցի հասցեին վարկարեկիչ խոսակցու-
թյուններ, հակառակ դպրոցի պահանջներին առաջադրում են երե-
խայի ռեժիմի, դասերը պատրաստելու իրենց ձևերը: Դպրոցի և
ընտանիքի անորմալ հարաբերությունները երեխաներին դրկում
են ուսման առաջավոր լինելուց, նրան դարձնում են սանձարձակ,
կոպիտ, անհամեստ և անկազմակերպ: Այս անախորժ փաստը ցույց
է տալիս ծնողների հետ դպրոցի և մանկավարժական կողեկտիվի
վատ աշխատանքը և մանկավարժական պրոպագնդայի բացա-
կայությունը, որպիսին բոլոր դեպքերում զնանում է դպրոցի
կրթական և դաստիարակչական աշխատանքներին:

ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԱՇԽԱ- ՏԱՆՔԻ ԶԵՎԵՐԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԵՋ

Դեռ բոլոր դպրոցները չեն, որ բավարար աշխատանք են
կատարում ծնողների մեջ: Հաճախ դպրոցն իր աշխատանքը բա-
վարար է համարում, երբ յուրաքանչյուր քառորդի վերջում
ծնողական ժողով է հրավիրվում աշակերտների գնահատական-
ները հայտնելու առիթով: Առանձին դեպքերում այս էլ ձևական
ընույթ է կրում:

Մենք բոլորովին չանտեսելով ծնողական ժողովների դերն
ու նշանակությունը, գտնում ենք, որ մանկավարժները պետք է
ծնողների հետ կապվեն նաև անհատորեն, բայց ոչ մինչև այժմ
տիրապետող ձևերով: Սովորաբար դաստիարակ-ուսուցիչն ընտա-
նիք է զնում, եթե երեխան վատ է սովորում կամ անկարգապա-
հության դեպք է թույլ ավել: Դրա համար էլ երբ ծնողները
տեսնում են դաստիարակ-ուսուցչի երեալը, տրամադրվում են
անպայման մի վատ բան լսել իրենց երեխաների մասին: Ան-
հատական այցելությունների այս ձևին պետք է վերջ տար Ու-
սուցիչը պետք է ընտանիք գնա, ծնողներին խոր-
հուրդներ տալու, թե ինչպես ծնողները պետք է
օգնեն երեխային դասերը պատրաստելու, ինչ-
պես պահպանել երեխայի տնային ռեժիմը, օգ-

նել ծնողներին ճանաչելու իրենց երեխաներին և
կուլտուրապես անց կացնել երեխայի ազատ ժա-
մանակը:

Ուսուցիչները պետք է լավ նախապատրաստեն ծնողական
ժողովները: Այդ ժողովներում բայց ընթացիկ հարցերի քննու-
թյուններ, պետք է կազմակերպել մի շարք մանկավարժական
պրակտիկ ու տեսական զեկուցումներ, երեխայի ուսուցման և
դաստիարակության հարցերի շուրջը:

Ծնողների ակտիվությունը բարձրացնելու համար կարևոր
նշանակություն ունի սոցմրցման և հարվածայնության զնորհալի
կազմակերպումը: Մեկ դասարանի ծնողական կողեկտիվը կարող
է մրցման մեջ մտնել մյուս դասարանի ծնողների հետ, վերց-
նելով զանազան պարտավորությունները: Օրինակ՝ դասարանի
ծնողական կողեկտիվը իր վրա կարող է վերցնել հետեւյալ պար-
տավորությունները: 1) բարեկարգ կերպով մասնակցել ծնողա-
կան ժողովներին, 2) երեխաներին առահովել դասագրքերով և
դասական սիտույքներով, 3) գուրս գրել երեխաների համար ման-
կական թերթեր և ամսագրեր, 4) հետեւ, որ երեխաները կա-
տարեն տնային առաջարանքները, որոնք հանձնանարկել են
դպրոցի կողմից, 5) երեխաներին դպրոց ուղարկել ժամանակին
և մաքուր հագնված, 6) օգնել ուսուցչին էքսկուրսիաների կազ-
մակերպման գործում, 7) դպրոցի հետ միասին երեխաների մեջ
դաստիարակել կիրթ-կուլտուրական վերաբերմունք դեպի մեծե-
րը, գեղի շվապատի մարդիկ:

Դպրոցը խելացիորեն պետք է օգնի նաև ծնողական կոմի-
տեի աշխատանքներին, որպեսզի ծնողական կոմիտեն կարողա-
նա մաքսիմալ կերպով օգնել երեխաների արտադասարանական
դաստիարակության գործին:

ԾՆՈՂՆԵՐԻ ԻՆՉՊԵՍ ՊԵՏ Է ՕԳՆԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԱՍԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

Շատերը կարծում են, որ երեխաներին հարկավոր չի օգնել,
նշանք դասերը պետք է ինքնուրույն պատրաստեն: Այդ հաս-
կացողությունը ձիւտ է, բայց ոչ ամբողջովին: Փորձերը ցույց
են տվել, որ ծնողների ձիւտ և կազմակերպված օգնությունը երե-

խայի անային դասերի պատրաստման ասպարեզում, մեծապես օգնում է սովորողների առաջադիմության բարձրացմանը: Գոյնություն ունի և մի այլ կարծիք: Առանձին մանկավարժներ գըտանում են, որ ծնողները մանկավարժներ չեն և կարող են իրենց օգնությամբ մասն և սխալ տեղեկություններ հաղորդել երեխաներին և այլն: Մեր կարծիքով ծնողը դպրոցականի անային դասերի պատրաստման դործում պետք է լինի ուսուցչի լավագույն օգնականը:

Ի՞նչ կարող են անել ծնողները. ամենից առաջ ծնողները պետք է գիտենան, թե ինչ դասագրքեր ու գրենական պիտույքներ են հարկավոր երեխաներին և ճիշտ ժամանակին ձեռք բերեն: Այսուհետև, ծնողները դպրոցականների համար պետք է ստեղծեն պարագելու նորմալ պայմաններ:

Առաջին, ծնողները պետք է հետևեն, որ երեխան կարդալիս չշտապի, այլ կարդա դանդաղ և հասկանալով: Կարեռ է նաև, որ երեխան կարդացածը մի քանի անգամ կրկնի, որպեսզի սովորած գիտելիքները երկար ժամանակ մնան հիշողության մեջ:

Երկրորդ. երեխայից պետք է պահանջել, որ գրավոր աշխատանքը կատարի համբերատարությամբ, գեղեցիկ և անսխարթ դրավոր աշխատանքը վերջացնելուց հետո, հետեւ որ երեխան ստուգի իր գրածի ճշությունը:

Երրորդ. երեխմն երեխան դասերը պատրաստելիս հանդիպում է դժվարությունների: Այս դեպքում երեխան անմիջապես չպետք է դիմի ուրիշի օգնությանը, այլ պետք է աշխատի իր սեփական ուժերով դուրս գալ դժվարությունից, իսկ երբ դպրոցականի ուժերը չեն պատում, միայն այդ դեպքում ծնողները պետք է օգնեն նրան:

Չորրորդ, պետք է կարգ մտցնել, որ երեխան ամեն օր նույն ժամերին դասերը պատրաստի: Այս կարեռ և դաստիարակչական նշանակություն ունի:

Հինգերորդ. դպրոցականը տանը պետք է ունենա պարապելու առանձին սեղան: Ծնողները պետք է հսկեն, որ երեխայի սեղանը պահպի մաքուր վիճակում և իր բոլոր պարագաներով (դասագիրք, տետր, թանաք, մատիտ, ատլաս, քանոն և այլն):

Այսպիսով՝ ծնողները դպրոցականներին պետք է օգնեն դեպքում միայն, երբ նա դժվարանում է և այլևս առաջ

շարժվել չի կարող: Շատ անդամ տան մեծերը կամ քարձր դասարանների աշակերտները վճռում են դպրոցականին առաջազդը ված խնդիրները, գրում են շարադրությունը և այլն: Այս կարգի «օգնությունը» դպրոցականին զրկում է ինքնուրույնությունից և մտավոր զարգացման հնարավորությունից:

Մեր կարծիքով ծնողները պետք է օգնեն դպրոցականին, եթե նա դասը սովորելիս հանդիպում է անձանոթ բառերի, որի պատճառով չի կարողանում հասկանալ դասի կամ նախադասության իմաստը: Մյուս կողմից անհրաժեշտ է հիշեցնել և օգնել երեխային, որ նա երբեք չմոռանա անցած դասերը, կարդաբարածայն, կարդացածի և վճռած խնդիրների իմաստը հասկանա և խուսափի անդիր անելուց: Շատ անգամ երեխաները զբաղվում են խաղով և մոռանում են իրենց հաջորդ օրվա դասերը պատրաստել այս դեպքում ծնողների պարտքն է հիշեցնել Ավելորդ չի լինի, որ ամեն օր երեխայի քնելուց առաջ, ծնողները ստուգին թե որքանով է նա իր վաղվա դասերը պատրաստել: Ծնողներն ավելի շատ բանով կարող են օգնել երեխաներին, եթե կապված լինեն դպրոցի ու մանկավարժական կոլեկտիվի հետ և միշտ հետաքրքրվեն իրենց երեխաների առաջադիմության և թերությունների մասին:

Ահա այս միջոցներով ծնողները կարող են դառնալ ուսման որակի բարձրացման ակտիվ մասնակիցներ, Ուսման գերազանցիկ աշակերտը—դա դպրոցի և ծնողների պարագանքն է: Հենց դրա համար էլ անհրաժեշտ է դպրոցի և ծնողական հասարակայնության համատեղ, մտածված աշխատանք:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

1. ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ
ԵՎ ՀԱՄ Կ(Բ)Պ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 1935 ԹՎԻ ՀՈՒՆԻՍԻ
1-ի ՈՐՈՇՈՒՄԻՑ

ԾՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՔՐԱՀԱՍԱԿԱՆԵՐԻ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

18. Միլիցիայի օրդաններին իրավունք վերապահել ծնող-
ներին վարչական կարգով տուգանելու մինչև 200 ռուբլու ահա-
մաններում՝ երեխաների կովարարության և փողոցային խուլի-
գանության համար:

19. Սահմանել ծնողների ու ինսամակաների նյութական
պատասխանատվությունն երեխաների՝ նյութական վնաս պատ-
ճառած գործողությունների համար:

20. Պարտավորեցնել լուսժողկոմատների ու միլիցիայի օր-
դաններին իրազեկ դարձնելու ծնողների տշխատավայրի հասա-
րակական կազմակերպություններին՝ ծնողների կողմից երեխա-
ների վարքի նկատմամբ հսկողությունը բացակայելու մասին:

22. Այս դեպքերում, եթե ծնողները չեն ապահովում պատ-
շաճ հսկողություն երեխայի վարքի նկատմամբ, լուսժողկոմատի
օրդանները պարտավոր են հարց հարուցել դատական օրդանների
առջև երեխային ծնողներից վերցնելու և նրան մանկատանը տե-
ղափորելու մասին, պահպանման ծախսը վճարելով՝ ծնողների
հաշվին:

2. «ՊՐԱՎԴԱ»-Ի 1935 թ. ՀՈՒՆԻՍԻ 1-ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԻՑ

Գործադրկությունը, սովոր, աղքատությունը—այդ բոլորը
վերացված է սովետական երկրում, և նրանց հետ միասին վե-
րացված են երեխաների անապատանության և անխնամության
հիմնական աղբյուրները: Սակայն, որպես կապիտալիզմի մնացորդ

մարդկանց գիտակցության մեջ դեռևս մնում է երեխաների նը-
կատմամբ ցուցաբերվող անուշադրությունը, քարսիբա վերաբեր-
մունքը: Ծնողներն ամենուրեք ձևական և անփուլթ վերա-
բերմունք են ցույց տալիս իրենց երեխաներին: Նրանք գտնում
են, թե դա իրենց «անձնական գործն է»: Սոցիալիստական պե-
տությունը ծնողներին չի աղատում երեխաներին դաստիարակե-
լու պարտականությունից, սակայն և չի համարում այդ որպես
նրանց մասնավոր գործը:

Ծնողների անուշադրությունը գեպի իրենց կարևորագույն
պարտականությունն աղբյուր է հանդիսանում երեխայի կովա-
րարության, որը վերաձևում է խուլիգանության և հանցագոր-
ծության: Եվ որոշումը սովետական բոլոր քաղաքացիներին
նախագգեցացնում է այն խստ պատասխանատվության մասին,
որ նրանք կրում են երեխաների համար:

Ուշադրություն բոլոր երեխաներին—առանց բացառության
բոլոր երեխաներին, թե նրանց, ովքեր ունեն հոգատար ու սի-
րող ծնողներ, թե նրանց, որոնց ծնողները մոռացել են իրենց
պարտականությունը՝ երեխայի հանդեպ, և պետության հան-
դեպ, և թե նրանց վերաբերմաբ, որոնց ծնողներին փոխարինել է
բանվորագյուղացիական իշխանությունը: Պետք է հրապարիչ,
գեղեցիկ և կենդանի հետաքրքրությամբ լի գարձնել բոլոր երե-
խաների կյանքը—այդ է և ընտանիքի, և գպրոցի, և հասա-
րակության խնդիրը, դրան պետք է ծառայեն գրականությունը,
արվեստը, մանկական թատրոններն ու կինոն:

ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ
ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աճող սերնդի կոմունիստական դաստիարակության գոր-
ծին օժանդակելու, դպրոցի և ընտանիքի կապն ամրապնդելու,
դպրոցին և ուսուցչին ուսումնագուստիարակչական աշխատանք-
ներում օդնելու, ծնողական հասարակության լայն շերտերին
մանկավարժական ու երեխաների առողջապահության խնդիրնե-
րին ծանոթ պահելու, արտադպրոցական աշխատանքների ու ե-
րեխաների հանգստի կազմակերպման գործում կարող և ակտիվ
ծնողներին ներգրավելու, ինչպես նաև դպրոցին տնտեսական

հարցերում՝ աջակցելու նպատակով՝ տարրական, ոչ լրիվ միջնաւ կարգ ու միջնակարգ դպրոցներում կազմակերպվում են ծնողական կոմիտեներ:

1. ԾՆՈՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

1. Հըավիրել ծնողական լայն ժողովներ, ուր մասսայականացնել պարտիայի ու կոտավարության որոշումները դպրոցի մասին, լսել զեկուցումներ մարքսիստական մանկավարժության, երեխաների ուսման ու դաստիարակության, առողջապահական և այլ խնդիրների մասին:

2. Կարող ծնողներին (գիտության, արվեստի, ուղմական գծով աշխատողներին, գրողներին, բժիշկներին, ստախանովականներին և այլ մասնագետներին) օգտագործել աշակերտական արտադպրոցական՝ գիտական, առարկայական, ինքնազործ, տեխնիկական խմբակների, հետաքրքիր զրույցների և աշակերտության հանգստի (համերգների, ցերեկույթների, էքսկուրսիաների) կազմակերպման համար,

3. Օգնել դպրոցին պայքարելու երկտարեցիության դեմ, զլխավորապես ետ մնացող աշակերտների համար օգնություն և ծնողների համար՝ իր երեխայի ուսուցմանն օժանդակելու նպատակով՝ կոնսուլտացիաներ կազմակերպելու միջոցով:

4. Օգնել դպրոցին կարգապահությունը դպրոցում բարձրացնելու համար (պայքարել կարգապահությունը սիստեմատիկ խախտող աշակերտների և խուլիզանական տարրերի դեմ, թե դպրոցից գուրս, թե դպրոցի ներսում, զլխավորապես այդպիսիներին ճանաչելու, նրանց ծնողների վրա ներազգելու, ծնողների պատասխանատվությունն իրենց երեխաների նկատմամբ ուժեղացնելու, երեխայի դաստիարակության գործից չարամտորեն խուսափող ծնողներին վարչական մարմինների միջոցով պատասխանատվության ենթարկելու, այդպիսիների հարցը դիրեկցիայի միջոցով նրանց կազմակերպություններին՝ պրոֆմիությանը հանձնելու և այլ եղանակներով):

5. Մասսայականացնել իրենց երեխաների դաստիարակությունը լավ հիմքերի վրա դրած ծնողների փորձը:

6. Համատեղ աշխատանք կատարել դպրոցի վարչության և ուսուցիչների հետ՝ աշակերտների հանգստի, զբոսանքի, տոների անցկացման աշխատանքների կազմակերպման դժով:

7. Օժանդակել դպրոցին տնտեսական աշխատանքներում (կազմակերպելու բուժետ, նախապատրաստելու ճամբար մեկնելը, հսկել դպրոցական տեխնիկական, գեղարվեստական) և զանազան թեմաների շուրջը՝ զեկուցումներ, դասախոսություններ:

դ) աշակերտներին ներդրավում է հասարակական-քաղաքական կամպանիաներում, անդրագիտության ու կիսագրագիտության վերացման և հասարակական կամավոր կազմակերպությունների աշխատանքների մեջ.

ե) քննարկում է աշակերտների մեջ տարվելիք արտադասարանային աշխատանքների պլանը.

զ) կազմակերպում և ուղղություն է ցույց տալիս դասարանական կազմակերպիչների աշխատանքներին, ցույց է տալիս անհրաժեշտ օգնություն նրանց աշխատանքներին և հսկում նըրա կատարմանը:

Աշակերտական կոմիտեն կոմերիտական և պիոներական կազմակերպությունների հետ՝

ա) հրատարակում է համադպրոցական թերթ և ամսագիր,

բ) նախապատրաստում և անց է կացնում ուղղուցիչն տոները, ինքնագործ երեկույթները և այլ մասսայական ձեռնարկումները.

գ) աշակերտների մեջ կազմակերպում է պաշտպանական և ֆիզկուլտ աշխատանքներ, ֆիզկուլտ և ուղմական խմբակներ, ուղմական խաղեր ու կատ է պահպանում կարմիր Բանակի միավորների հետ:

Դպրոցի գիրեկտորի հրավերով աշակերտական կոմիտեն իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին՝ աշակերտական կոմիտեի աշխատանքներին վերաբերող բոլոր հարցերի քննարկման ժամանակ:

§ 7

Դասարանական կազմակերպիչներն առաջին կիսամյակի համար ընտրվում են սեպտեմբերի 5—15-ի միջև ընկած ժամանակամիջոցում, իսկ երկրորդ կիսամյակի համար՝ հունվարի 13-ից—23-ը ժամանակամիջոցում:

Աշակերտական կոմիտեներն ընտրվում են սեպտեմբերի 15-ից 20-ի և հունվարի 23-ին 28-ի միջև ընկած ժամանակամիջոցում:

Նախքան աշակերտական կաղմակերպությունների ընտրություններին անցնելը աշակերտների մեջ տարվում է մասսայական-բացատրական աշխատանք աշակերտական կաղմակերպության դպրոցում ունեցած դերի ու նշանակության մասին, որն անց է կացվում ուսուցիչների, կոմիտական և պիոներական կազմակերպությունների միջոցով՝ դպրոցի դիրեկտորի և կոմիտմիության կազմակերպչի դեկավարությամբ:

3. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 8

Աշակերտական կոմիտեն աշխատում է դպրոցի դիրեկտորի, կոմիտմիության կազմակերպչի դեկավարության ներքո:

Աշակերտական կոմիտեի աշխատանքի պլանը հաստատվում է դպրոցի դիրեկտորի կողմից:

Աշակերտական կոմիտեն գումարում է նիստեր ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ:

Աշակերտական կոմիտեի առանձին նիստերին հրավիրվում են դասարանական կազմակերպիչները:

Դպրոցի դիրեկտորը կամ ուսմասվարը պարտադիր կարգով ներկա են լինում աշակերտական կոմիտեի բոլոր նիստերին:

2. ԾՆՈՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Դպրոցի յուրաքանչյուր դասարանի աշակերտների ծնողների ժողովն ընտրում է դասարանական ծնողական լիազոր և լիազորի օգնական, որոնք տվյալ դասարանի դասղեկ ուսուցչի հետ պլանավորում են իրենց աշխատանքը:

Դասարանի ծնողական լիազորը գործում է դիրեկտորի և ծնողական կոմիտեի ցուցումներով:

Ծնողական դասարանական ժողովը հրավիրվում է ամիսը մեկ անգամ:

2. Մինչև 5 դասարան ունեցող դպրոցներում ընտրվում է ծնողական կոմիտե բաղկացած 3 հոգուց: Այդպիսի դպրոցներում դասարանական լիազորներ չեն ընտրվում:

3. 6—14 դասարան ունեցող դպրոցներում ծնողական ընդհանուր ժողովն ընտրում է ծնողական կոմիտե՝ 5—7 անդամներից:

4. 15 և ավելի դասարան ունեցող դպրոցներում ծնողական կոմիտեն ընտրվում է 9—11 անդամներից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խոշոր դպրոցներում ծնողական կոմիտեի ընտրության ժամանակ՝ 1—4, 5—7, 8—10 դասարանների սովորողների ծնողներն առանձին ժողովներում ընտրում են ծնողական կոմիտեի անդամներին:

5. Ծնողական կոմիտեն ընտրում է իր նախագահը և քարտուղարը:

6. Ծնողական կոմիտեի անդամներից առանձնացվում են պատասխանատու աշխատողներ հետևյալ ընտրագավառների համար՝
ա) արտադպրոցական աշխատանքի,

բ) տնտեսական աշխատանքի,

գ) մանկավարժական և առողջապահական պրոպագանդայի*: Յուրաքանչյուր ընտրագավառում ծնողական կոմիտեի համապատասխան անդամն իր շուրջն է համախմբում ակտիվ ծնողներին:

7. Ծնողական կոմիտեն ընտրվում է տարեկան մեկ անգամ — տարով հաշվետվություն ծնողական ընդհանուր ժողովին իր կատարած աշխատանքների մասին:

8. Ծնողական կոմիտեն պարբերաբար հրավիրում է դասարանական ծնողական լիազորների խորհրդակցություններ համապատասխան օրակարգով, հրավիրում է ծնողական ակտիվի ժողովներ դպրոցի դիրեկտորի գիտությամբ (մեծ դպրոցներում ծնողական ժողովները կարող են հրավիրվել ըստ մասների):

9. Ծնողական կոմիտեի նախագահը մասնակցում է դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, իսկ դպրոցի դիրեկտորը պարտադիր կարգով մասնակցում է ծնողական կոմիտեի նիստերին:

10. Ծնողական կոմիտեի աշխատանքի պլանը և դպրոցական կան կլանքին վերաբերվող որոշումները հաստատում է դպրոցի դիրեկտոր-վարիչը:

3. ԴԱՍԱՐԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Դասարանական ժողովները հրավիրում է դասարանի ղեկավարը ծնողական լիազորի հետ:

* Մանկավարժական պրոպագանդան տարվում է բացառապես ուսուցիչների և մանկավարժական մասնագետների միջոցով:

Հ. Դասարանական ծնողական ժողովում դասղեկը գնում է հետևյալ խնդիրները՝

ա) քառորդի աշխատանքների պլանը և ծնողների անելիքները,

բ) զրույց տվյալ դասարանի երեխաների տարիքային առանձնահատկության մասին,

գ) քառորդի ուսումնական առաջադիմության արդյունքները և աշխատանքը հետ մնացող աշակերտների հետ,

դ) արտադպրոցական աշխատանքի պլանը,

ե) երեխաների օրվա օրինակելի ռեժիմը,

զ) ուելուցիոն տոների անցկացում դպրոցում և ընտանիքում,

է) երեխաների հանգստի կազմակերպումն ամառային, ձմեռային և գարնանային արձակուրդներին, ինչպես նաև հանգստի օրերին,

ը) տարեվերջի ստուգումների անցկացման կարգը,

թ) դպրոցական բժշկի ինֆորմացիան երեխաների առողջապահական գրության մասին,

ժ) դպրոցի մանկավարժական խորհրդի և ծնողական կոմիտեի համապատասխան որոշումների մասսայականացումը,

Ժ) պայքար կարգապահության ամրապնդման համար,

ԺԲ) առանձին ծնողների հաշվետվություններն իրենց երեխաների ուսուցման ու դաստիարակության մասին:

3. Ծնողական լիազորը և դասղեկը կազմակերպում են ծնողների և աշակերտների համատեղ ինքնազորժունեության երեկոներ, աշակերտներին տանում են հանդիսատեսական վայրեր և այլն:

4. Ծնողական լիազորը և դասղեկն ուսումնաթիրում են առանձին աշակերտների տները և ծանոթանում աշակերտների ուսումնական պայմանների հետ:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԵԼԻՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ, ԵՄ ՆԵՐԲՈՀԿԵՑԱԱ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Վ. Ի. Կենին.—Երիտասարդության միության ինդիրները ձառ ՌԿԵՄ համառուսաստանյան III համագումարում, 1920 թ. հոկտեմբերի 2-ին: Երկ. հ. XXX, էջ 403—417.
2. Ի. Ստալին.—Ճառ ԼԿԵՄ ութերրդ համագումարում:
3. Մ. Ի. Կալինին.—Կոմունիստական դաստիարակության հարցերը: Պետքաղ-հրատ, 1940 թ.:
4. Կ. Կրուպսկայա:—Երիտասարդության մասին, „Մոլոդая Гвардия“ 1940 թ.
5. Ս. Սիրկովսկի.—Անհատական և հանրային շահը սոցիալիստական հստարակության մեջ: „Спутник агитатора“ № 11, 1940 թ.:
6. Մակարենկո.—Աշխատանքը դաստիարակում է: «Սովետական մանկավարժ» № 9, հոկտեմբեր 1940 թ.:
7. Ա. Ա. Նեվովիլ:—Դպրոցական տարիքի երեխաների փեղեկական դաստիարակության հիմունքները: Լենինգրադ, 1939 թիվ:
8. Վ. Մոլոտով.—Ժող. տնտեսության երրորդ հնագամյա պլանի մասին:
9. Ֆ. Էնգելս.—Բանվոր դաստիարակի դրությունն Անդիխյում:
10. Մ. Ի. Կալինին.—Մարքսիզմ-Լենինիզմին տիրապետելու և սովետական ուսուցչության խնդիրների մասին. քաղաքական գրակ. Պետհրատ, 1939 թ.:
11. Ա. Ն. Մալով.—Դպրոցական առողջապահություն: Պետհրատ, 1939 թ.:
12. Պարտիայի և կառավարության որոշումները դպրոցի մասին: Հայպետհրատ, 1940 թ.:

Յ Ա Ն Կ

Ա. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

հջ

1. Ի՞նչ է բարոյականություն	3
2. Հերոսության դաստիարակությունը	5
3. Ինչպես դաստիարակել սեր դեպի աշխատանքը	6
4. Երեխայի կարգապահության հարցը	13
5. Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դաստիարակությունը	9
6. Ինչպես երեխայի մեջ զարգացնել աղնվություն	16
7. Ընկերականության և համերաշխության դաստիարակությունը	17
8. Երեխայի գեղարվեստական դաստիարակությունը	19
9. Երեխայի առողջապահության և փիզիկական դաստիարակությունը	22
10. Հաղակոնական դաստիարակությունը	26
11. Երեխայի սեռական դաստիարակությունը	28
12. Ընտանիքը և երեխայի սեռական դաստիարակությունը	30
13. Ինչպիսի՞ զրույցներ կազմակերպել երեխաների սեռական դաստ. մասին	33
14. Երկսեռ դաստիարակության մասին	35
15. Ներգային երեխաները և նրանց դաստիարակությունը	36
16. Կաղըիզ և նրա դեմ պայքարելու միջոցները	41

Բ. ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

17. Երեխայի դաստիարակության մի քանի օրինակներ	45
18. Ծնողների ժամանակցությունը դպրոցի աշխատանքին	48
19. Դպրոցի և մանկավարժական կուեկտիվի աշխատանքի ձևերը ծնողների մեջ	50
20. Ծնողներն ինչպես պետք է օգնեն երեխաներին դասերը պատրաստելու	51

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

21. Ծնողների պատասխանատվությունն ուժեղացնելու և փոքրահասակների իրավախախտումների գեմ պայքարելու միջոցառումների մասին	54
22. «Պրավդա»-ի 1935 թ. հունիսի 1-ի առաջնորդողից	54
23. Դպրոցի ծնողական կոմիտեների և նրանց անհիքների մասին	55

Խմբագիր Ավ. Ճուղուրյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Կարապետյան

Սրբագրիչ՝ Վ. Պողոսյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Պարոնիկյան
Վ.թ № 2658, հրատ. № 91

Պատկեր № 276, տիբաժ 1500

Հանձնված է արտադրության 1940 թ. նոյեմբերի 16-ին
Ստորագրված է ապագրության 1940 թ. դեկտեմբերի 7-ին:

Լուսնիքատի տպարան, Երևան, Տեղյան № 127

«Ազգային գրադարան



NL0229133

45. 363

ԳԻՒԸ 2 Ա.

ՅՈՒ Ա

В. Е. АСЛАНЯН

ПЕДАГОГИЧЕСКИЕ СОВЕТИ
О ВОСПИТАНИИ ДЕТЕЙ

ПРОСИЗДАТ

Ереван, типография Просиздата, Терян 127